

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

NN	Նպատակ	Միջոցառումներ	Գործողության կատարման ընթացքը	Գործողության արդյունքը (առկայության դեպքում՝ թվային ցուցանիշներով)	Գործողության չկատարման վերաբերյալ պարզաբանում
<b>1. Պարենի առկայություն</b>					
1	Հողային և ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման, կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողակա նության համակարգի ներդրում	1.1 Ոռոգման ջրի ստանդարտի մշակում	Ոռոգման ջրի ստանդարտի մշակման աշխատանքներն ընդգրկվել են 2024 թվականի պետական ստանդարտացման ծրագրում և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 2024 թվականի հունիսի 28-ի N 71-Ն հրամանով ընդունվել և գործողության մեջ է դրվել <b>ՀՍ 438-2024</b> «Ոռոգման ջրի. Ոռոգման ջրի որակին ներկայացվող պահանջներ» ազգային ստանդարտը:	<b>ՀՍ 438-2024</b> «Ոռոգման ջրի. Ոռոգման ջրի որակին ներկայացվող պահանջներ» ազգային ստանդարտ	
		1.2 Ագրոօդերևութաբանական նշանակության տարեկան 3-4 կայանների տեղադրում հանրապետության այն	ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման բարելավում» ծրագրի 1-ին՝ «Ջրային ոլորտի ժամանակակից տեխնոլոգիաների և գործիքների ներդրում»	Արդիականացված 2 հիդրոլոգիական դիտակետ և 1 նոր ավտոմատ օդերևութաբանական կայան	

<p>կլիմայական գոտիներում, որտեղ մոնիթորինգ չի իրականացվում և տեղակայված կայանների ցանցն համեմատաբար նոսր է</p>	<p>բաղադրիչի շրջանակներում 2025 թվականին արդիականացվել են 2 հիդրոլոգիական դիտակետեր՝ Արփա-Սևան-Ծովինար և Հրազդան ՀԷԿ-ի ուղղաթեք ջրանցք-Գեղամավան: Դիտակետերում տեղադրվել են ջրի ռադարային մակարդակաչափեր, զինված տվյալների ավտոմատ գրանցման և առցանց փոխանցման համակարգերով:</p> <p>EU4Sevan ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել մեկ ավտոմատ օդերևութաբանական կայան զինված ջրի և օդի ջերմաստիճանի, տեղումների քանակի, օդի խոնավության, քամու ուղղության և արագության, մթնոլորտային ճնշման, արեգակնային ռադիացիայի, ջրային մակերևույթից գոլորշացման տվիչներով, վերջին տեղադրվել է Սևանա լճի առափնյա գոտում: Ավտոմատ օդերևութաբանական կայանն ինտեգրվել է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում ներդրված տվյալների առցանց ստացման և վիզուալիզացման միասնական համակարգին և 10 թույլ պարբերականությամբ տվյալներ է փոխանցում վերը նշված օդերևութաբանական բնութագրիչների վերաբերյալ:</p> <p>Ճապոնիայի կառավարության կողմից ֆինանսավորվող «Հայաստանի ջրամբարների կառավարման կարողությունների բարելավում» կլիմայական ռիսկերի դիմակայունության համար» ծրագրի շրջանակներում ձեռք է բերել 3 ավտոմատ օդերևութաբանական կայան և 2 ջրի ռադարային մակարդակաչափ: Որոնք տեղադրվելու են 2026 թվականի 1-ին եռամսյակում:</p>	
<p>1.3 Հիդրոօդերևութաբանության և հողերի մոնիթորինգի համակարգերի արդիականացում</p>		

1.4 Փոփոխվող բնակլիմայական պայմաններում ըստ գյուղատնտեսական գոտիների մշակաբույսերի արդյունավետ մշակության հնարավորությունների գնահատում

Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հետ համատեղ իրականացվել է բարձրարժեք մշակաբույսերի դիվերսիֆիկացիայի բարձրացմանն ուղղված գյուղատնտեսության ոլորտի արտադրական համակարգի բարելավման արտադրողականության և մրցունակության բարձրացմանն ուղղված գնահատում և գյուղատնտեսության ոլորտի առկա կարիքների ուսումնասիրություն: Ծրագրի շրջանակներում ընտրված խորհրդատվական ընկերությունների հետ համատեղ իրականացվում են մասնագիտական աշխատանքներ՝ Ծրագրով նախատեսված ներդրումներն իրականացնելու նպատակով:

Պարենի համաշխարհային կազմակերպության (WFP) կողմից 2024թ.-ին իրականացվել է Հայաստանում պարենային անվտանգության վրա կլիմայական փոփոխությունների ազդեցության գնահատում, սակայն հաշվի առնելով կլիմայական գլոբալ փոփոխությունները՝ Էկոնոմիկայի նախարարությունը դիմել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությանը (OECD)՝ նոր հայեցակարգ մշակելու և հետագայում հետազոտություն իրականացնելու համար: Արդյունքում, OECD-ն իրականացրել է ուսումնասիրություն և Էկոնոմիկայի նախարարություն ներկայացրել «Հայաստանում ագրո-կլիմայական ազգային գոտիավորում» թեմայով վերլուծական փաստաթուղթը:

«Կլիմայական փոփոխություններին հարմարեցվող պարենային անվտանգության բարձրացման» ծրագրի շրջանակում մշակաբույսերի արդյունավետ մշակության հնարավորությունների գնահատում կարող է իրականացվել 2026 թվականին: Ծրագրի շրջանակներում Շիրակի և Տավուշի մարզերի 10 բնակավայրերում նախատեսվում է կարճ ցուցակում ներառված **206 տնային տնտեսությունների այգիների հիմնում/լավարկում և 31 տնային տնտեսությունների կողմից ներկայացված բիզնես նախագծերի աջակցում**: 206 տնային տնտեսություններին, նախնական գնահատականով, նախատեսվում է հետևյալ աջակցություններից մեկի տրամադրումը.

- ջերմոցի հիմնում,
- կաթիլային ոռոգման համակարգի հիմնում,
- հակակարկտային ցանցի տեղադրում,
- մոտոբլոկի տրամադրում;

Հետևյալ տեսակներից մեկ մշակաբույսի տնկանյութի ձեռք բերում և այգետնկում՝ խնձոր,

				<p>բալ, հոն, թուզ, դեղձ, տանձ, նեկտար, սալոր, նուռ, ազնվամորի, անփուշ մոշ և ընկույզ:</p> <p>31 տնային տնտեսությունների կողմից ներկայացված բիզնես նախագծերի համար.</p> <ul style="list-style-type: none"> <li>• թունելային տիպի ջերմոց՝ երկշերտ պոլիէթիլենային թաղանթով,</li> <li>• կաթիլային ոռոգման համակարգ,</li> <li>• մրգերի սառնարանային պահեստ,</li> <li>• խոնավեցնող ոռոգման համակարգ:</li> </ul>	
2	<p>Բնական ռեսուրսների կայուն կառավարման միջոցով պարենային ինքնաբավության մակարդակի բարձրացում</p>	<p>2.2 Մշակված պլանով սահմանված մեխանիզմներով արտոների օգտագործման կառավարում</p>	<p>2025 թվականի ընթացքում համայնքներում առկա են ավագանու կողմից հաստատված արտոների օգտագործման (կառավարման) պլաններ և որոշ համայնքներում աշխատանքներ են տարվում պլանների մշակման համար:</p> <p>«Հ կոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և 2025 թվականի հոկտեմբերի 10-ի ՀՕ-341-Ն ՀՀ օրենքով լրացումներ է իրականացվել ՀՀ հողային օրենսգրքում, համաձայն որի արտաավայրերի վարձակալության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 25 տարի ժամկետով՝ սոցիալական կամ բարեգործական կամ ՀՀ կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրեր (այդ թվում «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով</p>	<p>«Հ Արարատի մարզ՝ Վեդի համայնքում ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 189-Ա որոշմամբ հաստատված արտաավայրերի և խոտհարքների օգտագործման կարգի համաձայն արտաավայրերը տրամադրվում են ըստ կենդանիների տեսակի և քանակի հաշվարկի:</p> <p>2025 թվականին կնքվել է արտաավայրերի 78 կարճաժամկետ պայմանագիր՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Արտաշատ համայնքում առկա է 21451.5 հա արոտ: Կնքվել են 13296.9 հա-ի օգտագործման պայմանագրեր:</li> <li>• Արարատի ավագանին 749.6 հա հեռագնա արոտները</li> </ul>	

նախատեսված ՊՄԳ ծրագիր) իրականացնելու նպատակով: Ինչպես նաև սահմանվել է պարտադիր դրույթ արոտավայրերը վարձակալության իրավունքով տրամադրվելու պարագայում դրանք ըստ նպատակային և գործառնական նշանակության օգտագործման վերաբերյալ:

Ավստրիական զարգացման գործակալության հետ համագործակցությամբ 2025 թվականից «Բազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության կողմից մեկնարկել է «Նորարական անասնապահություն կենդանիների նախաքաշ, բուծում և շուկաներ» (INLIMA) նոր ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է.

1. մշակել երեք նախաքաշի քարտեզ,
2. մշակել 50-ից ավելի արոտային ենթակառուցվածքների նախագծեր,
3. հիմնել 23 արոտային ենթակառուցվածքներ,
4. շուրջ 60 հա դեգրադացված արոտավայրերում իրականացնել արոտավայրերի որակական բարելավում:

«Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ-հյուսիս 2» ծրագրի արոտավայրերի հասնելության բարելավման բաղադրիչի շրջանակում.

1. 302 տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ և արոտօգտագործողներ (որոնց 30%-ը՝ կին) բարելավել են իրենց գիտելիքներն ու հմտությունները՝ ուղղված արոտավայրերի կայուն կառավարման, պլանավորման և վերահսկման գործընթացներին,

տրամադրել է օգտագործման, թվով 20 միավորով 8 անձի,

- Վերին Դվին համայնքում պարզեցված կարգով կնքվել է 22 համապատասխան պայմանագիր՝ ըստ արոտամասերի, որը կազմում է 4000 հա:

ՀՀ Արմավիրի մարզ - արոտների դեգրադացիայի կանխման և արոտների արդյունավետ օգտագործման նպատակով թվով 5 համայնք հաստատել է արոտների կառավարման պլան, իսկ Արմավիր և Փարաքար համայնքները մշակման փուլում են:

ՀՀ Գեղարքունիքի մարզ - 5 համայնքներում ավագանու որոշմամբ հաստատվել են արոտների օգտագործման պլանը՝ արոտների դեգրադացիայի կանխման և արոտների արդյունավետ օգտագործման նպատակով:

ՀՀ Կոտայքի մարզ - Արոտների արդյունավետ օգտագործման և կառավարման պլանները գտնվում են մշակման փուլում և դրանք ավագանիների հաստատմանը կներկայացվեն 2026 թվականի առաջին կիսամյակում:

ՀՀ Լոռու մարզ - իրականացվել են շուրջ 250 հա արոտավայրերի և խոտհարքերի, շուրջ 250 հա վարելահողերի բարելավման աշխատանքներ (դեգրադացման

2.67 գյուղական բնակավայրերում թարմացվել և ներդրվել են արոտավայրերի արդյունավետ օգտագործման և կառավարման մոտեցումներ,

3. շահագործման են հանձնվել 8 ջրախմոց և 2 հովվի կացարան:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (որպես համակատարող) «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից մի շարք ծրագրերի շրջանակներում իրականացվել են արոտավայրերի բարելավման հետևյալ միջոցառումները.

1. Մշակվել և շրջանառվել են.

- «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը,

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 5-ի N 725-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը,

- Սիսիան և Թումանյան համայնքների 12 բնակավայրերի արոտավայրերի կառավարման պլանները:

2. Իրականացվել է Սիսիան համայնքի 170 հա, Թումանյան համայնքի 250 հա

դեմ պայքար): Աշխատանքներ են ընթանում ըստ բնակավայրերի արոտավայրերի կառավարման պլանների կազմման ուղղությամբ:

ՀՀ Ծիրակի մարզ - «Ռեզերվարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ համատեղ Ամասիա համայնքի Գտաշեն, Արեգնադեմ, Զրածոր, Ամասիա, Արդենիս, Գառնադիճ, Ծաղկուտ, Զարիշատ և Աշոցք համայնքի Թորոսգյուղ, Գոգիովիտ, Մուսայեյյան, Սալուտ, Բավրա, Զույգաղբյուր, Կրասար բնակավայրերում կազմվել է արոտների օգտագործման և կառավարման պլան:

Անի համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 14-ի N 6-Ն որոշմամբ հաստատվել է արոտների օգտագործման և կառավարման պլան: Միաժամանակ հայտնում են, որ մարզի մյուս համայնքներում աշխատանքներն ընթացքի մեջ են:

ՀՀ Սյունիքի մարզ - համայնքների ավագանու որոշմամբ հաստատված համայնքների 62 բնակավայրերը ունեն արոտների օգտագործման և կառավարման պլան արոտների դեգրադացիայի կանխման և արոտների արդյունավետ օգտագործման նպատակով: Միայն Կապան և

դեգրադացված արոտավայրերի և խոտհարքների բարելավում (քարհավաք, թփուտների և գուղձերի վերացում, տարածքից քարերի և հատված թփերի հեռացում, բազմամյա արոտային խոտաբույսերի խառնուրդ սերմերով ենթացանքի կատարում, փոցխում և դրոնների միջոցով օրգանական պարարտանյութերով պարարտացում):

3. Վայոց ձորի մարզի Վայք, Եղեգիս, Ջերմուկ և Գեղարքունիքի մարզի Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ համայնքների հողերի դեգրադացիայի գնահատում և քարտեզագրում:

4. Արոտավայրերի վերականգնման պիլոտային տարածքների ընտրություն՝ Եղեգիս 42 հա, Վայք 35 հա, Ջերմուկ 58 հա, Վարդենիս 60 հա, Մարտունի 45 հա, Շողակաթ 30 հա: Տարածքները ընտրվել են ըստ դեգրադացիայի աստիճանի և վերականգնման իրատեսական արդյունավետության:

5. Բարելավման նպատակով ձեռք է բերվել և համայնքներին տրամադրվել հանքային պարարտանյութեր և տարածքին բնորոշ արոտային խոտաբույսերի սերմեր: Բարելավման աշխատանքները կմեկնարկեն 2026 թվականի գարնանը:

6. Ագրոբնապահպանական վճարի ներդրման նպատակով մշակվել է ագրոբնապահպանական վճարի հաշվարկման մեխանիզմը, արոտավայրերի արտադրողականության գնահատման մեթոդաբանությունը և արոտվերականգնման աշխատանքների մոնիթորինգի գործիքակազմը:

Մեղրի համայնքները չունեն արոտների օգտագործման և կառավարման պլան:

«Վայոց Ձորի մարզ - Արոտների օգտագործման և կառավարման պլան մշակվել է մինչև 2017թ.» Արենի համայնքի Արենի, Ելփին, Խաչիկ, Չիվա և Ռինդ վարչական շրջաններում: Մշակվում է արոտների օգտագործման նոր պլան 2026-2030թթ.-ի համար: Համայնքի ավագանու որոշմամբ սահմանվել են արոտների օգտագործման կարգը, բաժանվել են գարնանային և աշնանային արածեցման սեզոններ, ինչի շնորհիվ արոտների դեգրադացիայից հնարավոր կլինի խուսափել:

«Տավուշի մարզ - նոյեմբերյան համայնքում առկա է արոտների օգտագործման և կառավարման պլան:

		<p>7. Արոտավայրերի վրա ճնշումը նվազեցնելու և կենդանիների պահվածքը բարելավելու նպատակով Վարդենիկ, Գետիկ, Դրախտիկ, Քարագլուխ, Գոմք և Բարձրունի բնակավայրերի վարչական տարածքներում կառուցվել են մեկական ջրարբիացման կետեր:</p> <p>8. Բարելավվել են Ուրցաձոր՝ 120 հա, Շաղափ՝ 101 հա, Լանջանիստ՝ 30 հա բնակավայրերի դեգրադացված արոտավայրեր:</p> <p>Բարելավվում իրականացվել է հանքային (ազոտական, ֆոսֆորական, կալիումական), օրգանական պարարտանյութերի համակցմամբ և տարածքին բնորոշ արոտային խոտաբույսերի սերմերի ցանքով:</p> <p>Կադաստրի կոմիտեն ապահովվել է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի գեոպորտալի բազային շերտերի հասանելիություն առցանց քարտեզագրական ծառայության (Օ Ջի Սի Վի Էմ Էս (OGC WMS)) միջոցով:</p>		
	<p>2.3 Օրգանական պարարտանյութերի տեղական արտադրության զարգացման ուղղված միջոցառումների իրականացում</p>	<p>2025 թվականի հունիսի 3-ից ուժի մեջ են մտել «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, համաձայն որի տեղական արտադրության օրգանական պարարտանյութերի գրանցման համար 2 տարի հանրապետության տարբեր բնակլիմայական պայմաններում դաշտային և լաբորատոր փորձարկումների պահանջ նախատեսված չէ:</p> <p>«Արևելյան գործընկերության երկրներում «Կանաչ գործարքի» պատրաստվածության խթանում» (PROGRESS) ծրագրի շրջանակներում նախատեսվում է հայտարարել</p>	<p>Ծրագրի առաջարկվող նպատակն է. շրջանակում նախագծերի</p>	

«Օրգանական ծագման պարարտանյութերի արտադրության» ցուցադրական ծրագրի մրցույթ, որն իրականացնում է «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» (ICARE) հիմնադրամը՝ PROGRESS ծրագրի աջակցությամբ՝ «Կլիմայախելամիտ գործելակերպի ցուցադրումը Հայաստանի այգեգործության մեջ» ծրագրի շրջանակներում: Ծրագրի առաջարկների նպատակն է բացահայտել և աջակցել նորարարական, գործնական և մասշտաբային նախաձեռնություններին, որոնք ցուցադրում և առաջարկում են կայուն, շրջակա միջավայրի համար պատասխանատու, ռեսուրսների արդյունավետ և կլիմայական պայմաններին դիմակայող լուծումներ օրգանական ծագման պարարտանյութերի մշակման ոլորտում:

- ներդնել առաջադեմ մոտեցումներ և լուծումներ գոմաղբի հավաքման և մշակման/մաքման համար՝ քայքայումը արագացնելու և ավելի որակյալ, անվտանգ պարարտանյութի մշակումն ապահովելու համար,

- բարելավել օրգանական պարարտանյութեր արտադրող կազմակերպությունների կարողությունները և նպաստել նորարարական տեխնոլոգիաների զարգացմանը,
- ամրապնդել ոլորտային շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ գյուղատնտեսական բիզնեսների, ներդրանքների մատակարարների և ֆերմերների միջև կապերը և համագործակցությունը,
- խթանել օրգանական պարարտանյութերի ավելի լայն օգտագործումը, այդպիսով նպաստելով կայուն գյուղատնտեսական արտադրությանը, բարելավելով բերքի որակը և պարենային անվտանգությունը, ինչպես նաև ամրապնդել Հայաստանի մրցունակությունը ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մրգերի շուկաներում,

				<ul style="list-style-type: none"> <li>• ստեղծել օրգանական ծագում ունեցող պարարտանյութերի արտադրության համակարգ՝ գյուղատնտեսական մնացորդներից (օրինակ՝ գոմաղբ) մինչև սննդանյութերի կայուն արտադրություն, որոնք նպաստում են ֆերմերների եկամտի աճին, բերքատվության, պարենային անվտանգության և բույսերի դիմադրողականության բարձրացմանը՝ տարբեր կլիմայական ռիսկերի, վնասատուների և հիվանդությունների նկատմամբ: Միաժամանակ, ցուցադրական նախագծերը պետք է գործեն որպես ուսումնական կենտրոններ օրգանական պարարտանյութեր արտադրողների, ֆերմերների և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի համար:</li> </ul>	
3	Ագրոպարենային արտադրանքի իրացման և արտահանման ներուժի արդյունավետ օգտագործում	3.1 Արտադրանքի և շուկաների դիվերսիֆիկացում	<p><b>Արտադրանքի և շուկաների դիվերսիֆիկացման նպատակով սննդամթերքի անվտանգության պահանջների և դրանց ապահովման նպատակով ներդրված HACCP համակարգ կամ ISO 22000 ստանդարտ</b></p> <p>Գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրանքի արտադրության, այդ թվում՝ արտադրանքի և շուկաների դիվերսիֆիկացման, արտադրության կառավարման համակարգերի բարելավման, այդ թվում՝ սննդամթերքի անվտանգության</p>	<p>Հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացման, գործարար նոր կապերի հաստատման և համագործակցությունների ձեռքբերման, արտադրանքի արտահանման ծավալների աճի խթանման նպատակով</p> <p>1) ապահովվել է մասնակցություն ԱՄԷ Դուբայ քաղաքում 2025 թվականի փետրվարի 17-ից 21-ը կայացած</p>	

			<p>կառավարման ՎՎՀԿԿ/ HACCP սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի կամ ISO 22000 ստանդարտի ներդրման նպատակով, 2025 թվականի հունիսի 5-ի N 737-Ն որոշմամբ հաստատվել է «Կառավարման համակարգերի և արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատների ստացման աջակցության ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագրի գլխավոր նպատակն է աջակցել փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ), որպեսզի ներդնեն միջազգային ստանդարտներ: Այն կնպաստի.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. հայկական արտադրանքի և ծառայությունների որակի և անվտանգության մակարդակի բարձրացմանը.</li> <li>2. միջազգային շուկաներ դուրս գալու հնարավորությունների ընդլայնմանը և արտահանման ներուժի մեծացմանը.</li> <li>3. առանցքային ոլորտներում (սննդի անվտանգություն, գյուղատնտեսություն և արտադրություն) կայուն աճի ապահովմանը: Ծրագրի համաձայն, նախատեսվում է մասնակի փոխհատուցել արտադրությունում ներդրված կառավարման համակարգերի՝ ԻՍՕ 9001, ԻՍՕ 14001, ISO և FSSC 22000 ստանդարտներից որևէ մեկին համապատասխան տրամադրված սերտիֆիկացման ծախսերը, Գլոբալ Գ.Ա.Փ. (այսուհետ՝ Global G.A.P.), «հալալ», «օրգանական», «անցումային շրջանի օրգանական» սերտիֆիկատների ծախսերը, և այլն: Փոխհատուցումը նախատեսվում է իրականացնել հետևյալ չափերով՝</li> </ol>	<p>«Gulfood-2025» սննդի և խմիչքների 30-րդ միջազգային ցուցահանդեսին,  2) Կազմակերպվել է հայկական գինեգործական ընկերությունների մասնակցությունը Գերմանիայի Դյուսելդորֆ քաղաքում կայացած հեղինակավոր ProWein գինիների և ոգելից խմիչքների միջազգային ցուցահանդեսին,  3) ապահովվել է մասնակցություն Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում անցկացված Wine Paris միջազգային ցուցահանդեսին,  4) ապահովվել է մասնակցություն Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյում կայացած FOODEX Japan Ասիայի խոշորագույն սննդի և ըմպելիքների ցուցահանդեսին,  5) ապահովվել է մասնակցություն Եկատերինբուրգում անցկացված ArmWine թեմատիկական ցուցահանդեսներին,  6) Կազմակերպվել են հայկական գինիների մասնագիտական համոտես-շնորհանդեսներ միջազգային փորձագետների, լրագրողների և ոլորտի մասնագետների համար,  7) հայկական գինեգործական ընկերությունների ներկայացրած գինիները արժանացել են բարձր</p>	
--	--	--	---	--	--

			<p>1) ISO 9001 և ISO 14001 սերտիֆիկատների դեպքում՝ սերտիֆիկացման ծախսի 50%-ի չափով, բայց ոչ ավելի քան 1 000 000 (մեկ միլիոն) դրամ.</p> <p>2) ISO 22000 և FSSC 22000 սերտիֆիկատների դեպքում՝ սերտիֆիկացման ծախսի 50%-ի չափով, բայց ոչ ավելի քան 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ.</p> <p>3) «Global G.A.P.», «Հալալ», «օրգանական» և «անցումային շրջանի օրգանական» սերտիֆիկատների դեպքում՝ սերտիֆիկացման ծախսի 50%-ի չափով, բայց ոչ ավելի քան 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ:</p> <p>2025 թվականի ընթացքում Ծրագրի շրջանակներում աջակցություն է ստացել թվով 3 կազմակերպություն («Յունիոն» ՍՊԸ - ISO 22000, «Զիս ֆուդ» ՍՊԸ - ISO 22000, «Ագրի» ՍՊԸ - օրգանական սերտիֆիկատ):</p> <p>Որոշմամբ հաստատված ծրագիրը կարևոր քայլ է հայկական արտադրության որակական հատկանիշների բարելավման և արտաքին շուկաներում մեր երկրի դիրքերի ամրապնդման գործում և կնպաստի հայկական արտադրանքի որակի բարձրացմանը, առանցքային ոլորտների աճի և մրցունակության խթանմանը:</p> <p>Բացի այդ, 2025 թվականին Հայաստանի Հանրապետությունը իրավունք ստացավ ձուկ և ձկնամթերք արտահանել ԵՄ երկրներ, որի համար ԵՄ-ի փորձագետները Երևանում վերապատրաստման դասընթացներ իրականացրեցին Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի</p>	<p>մրցանակների Concours Mondial de Bruxelles և International Wine and Spirit Competition հեղինակավոր մրցույթներում,</p> <p>8) 2025 թվականին Չինաստանի Ինչուան քաղաքում անցկացված Concours Mondial de Bruxelles մրցույթի շրջանակում հայկական պատվիրակությունը մասնակցել է որպես համտեսող-գնահատող: Մրցույթի վերջին օրը՝ հունիսի 12-ին, հայտարարվել է, որ 2026 թվականի մրցույթը կհյուրընկալի Հայաստանը,</p> <p>9) Շվեյցարիայի «Շանժեն» խաղողագործության և գինեգործության բարձրագույն դպրոցի (HES-SO) միջազգային ամառային ծրագրի շրջանակում կազմակերպվել է մի շարք երկրների առաջատար համալսարանների ուսանողների այցը: Իրականացվել է նաև Ճապոնիայի ROTOBO «Business Matching» ծրագրի պատվիրակության այցը,</p> <p>10) 2025 թվականին միջազգային մեդիա հարթակներում հրապարակվել է շուրջ 36, իսկ տեղական մեդիայում՝ շուրջ 61 հրապարակում՝ ուղղված հայկական գինեգործության ճանաչելիության բարձրացմանը,</p>	
--	--	--	--	---	--

			<p>աշխատակիցների և արտահանողների համար: Գործընթացը ներկայումս գտնվում է վերջնական փուլում, և շատ մեծ է հավանականությունը, որ 2026 թվականին հայկական արտադրության ձկնամթերքի առաջին խմբաքանակը կարտահանվի ԵՄ անդամ երկրներ:</p> <p><b>Տարեկան առնվազն 2 նոր շուկաների մուտք</b></p> <p>2025 թվականին առաջին անգամ ծմերուկ է արտահանվել Բոսնիա և Հերցեգովինա, Մակեդոնիա, դեղձ՝ Ռումինիա, ակոհոլային խմիչքներ՝ Եթովպիա:</p>	<p>11) հաջողությամբ ներկայացվել է հայտ և ընդգրկվել է Ճապոնիայի ԷԱԱ նախարարության կողմից ֆինանսավորվող Trade and Investment Promotion Project ծրագրում: «Business Matching» նախաձեռնության շրջանակում հայ գինեգործները առաջին անգամ միասնական տաղավարով մասնակցել են Տոկիոյում կայացած «FOODEX JAPAN» ցուցահանդեսին,</p> <p>12) աջակցություն է տրամադրվել «Ամերիկյան երկրների մրցունակության փոխանակում» (ACE Armenia) ծրագրի մասնակիցների Վայոց ձորի այցի կազմակերպմանը, ինչպես նաև մասնակցություն է ապահովվել ոլորտային պանելային քննարկմանը,</p> <p>13) սկսվել է համագործակցություն աշխարհի խոշորագույն գինու առցանց հարթակներից մեկի՝ Vivino-ի հետ: Գովազդային արշավներին մասնակցել է 14 հայկական գինեգործական ընկերության՝ 29 տարբեր անվանումների գինի,</p> <p>14) Ֆրանսիայի Օվերն-Ռոն-Ալպ տարածաշրջանի հետ համագործակցության արդյունքում իրականացվել են փոխադարձ այցելություններ՝</p>	
--	--	--	--	--	--

				<p>փորձի փոխանակման նպատակով,</p> <p>15) յուրաքանչյուր ամիս վերանայվում ու վերամշակվում են «Wines of Armenia» առցանց հարթակի սոցմեդիա էջերի համար նախատեսված արշավային տեքստերն ու լուսանկարները՝ ապահովելով բարձրակարգ մասնագիտական բովանդակություն,</p> <p>16) կազմակերպվել է 6 ընկերության գինիների արտահանում դեպի Բեռլինում գործող լոգիստիկ կենտրոն՝ «Wines of Armenia» առցանց հարթակում ներկայացնելու համար,</p> <p>17) GIZ-ի հետ համագործակցությամբ անցկացվել է գինեգործության ոլորտի ներկայացուցիչների երկօրյա վերապատրաստում՝ միջազգային ցուցահանդեսներին արդյունավետ մասնակցության հմտությունների կատարելագործման նպատակով,</p> <p>18) ապահովվել է մասնակցություն ՉժՀ Շանհայ քաղաքում 2025 թվականի նոյեմբերի 5-10-ը «Չինաստանի 8-րդ միջազգային ներմուծման» ցուցահանդեսին (CIIE),</p> <p>19) ճապոնիայում անցկացվող «Expo 2025 Osaka, Kansai, Japan»</p>	
--	--	--	--	--	--

				<p>համաշխարհային ցուցահանդեսի շրջանակում նշվել է Հայաստանի ազգային օրը:</p> <p>20) Կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության՝ ազգային տաղավարի ձևաչափով մասնակցությունը Մոսկվայում կայացած «Продэкспо» 2025» սննդամթերքի և խմիչքների միջազգային ցուցահանդեսին:</p> <p>21) Կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության գործարարների մասնակցությունը Գերմանիայի Քյոլն քաղաքում կայացած «Anuga 2025» սննդի և խմիչքների միջազգային ցուցահանդեսին:</p> <p>22) Ապահովվել է Հայաստանի Հանրապետության՝ ազգային տաղավարի ձևաչափով մասնակցությունը «BCB Convent Berlin 2025» գինու և ոգելից խմիչքների միջազգային ցուցահանդեսին:</p> <p>23) Կազմակերպվել է հայաստանյան արտադրողների՝ ազգային տաղավարի ձևաչափով մասնակցությունը Իրաքի Էրբիլ քաղաքում կայացած «AgroPack Iraq 2025»</p>	
--	--	--	--	---	--

				գյուղատնտեսական միջազգային ցուցահանդեսին:	
		3.2 ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակում և իրականացում	2025 թվականի հուլիսի 31-ի N 1068-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության արտահանման խթանման 2025-2030թթ. ռազմավարական ծրագիրը և դրա կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը»:	Հայաստանի արտահանման 2025-2030թթ միջոցառումների ծրագիրը ներառում է 5 ռազմավարական նպատակների կատարմանն ուղղված 14 ծրագիր և 75 միջոցառում:	
4	Գյուղատնտեսության զարգացում, արտադրողականության բարձրացում և կայուն անասնահամաճարակային և բուսասանիտարական իրավիճակի ապահովում	4.1 Մշակաբույսերի սորտերի և հիբրիդների զարգացում, կենդանիների ցեղերի բարելավում, արտադրողականության աճ	<p><b>Հացահատիկային, հատիկաընդեղեն և բանջարային սելեկցիայի իրականացված աշխատանքներ</b></p> <p>2025 թվականին «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ում ուսումնասիրվել են՝ հատիկաընդեղեն մշակաբույսերից՝ ոսպի 2, յուղատու կտավատի՝ 1, եգիպտացորենի՝ 7, սորգոյի՝ 3, կարտոֆիլի՝ 17 սորտեր և հիբրիդներ:</p> <p>Հացազգի մշակաբույսերի մրցութային, նախնական, ստուգիչ, սելեկցիոն և հիբրիդային տնկարաններում ուսումնասիրվում են ավելի քան 200 հիբրիդային սորտանմուշներ և գծեր:</p> <p>Սորտափորձարկման նպատակով ներկայացվել են տրիտիկալեի և եգիպտացորենի 1-ական հեռանկարային սորտեր:</p> <p>«Երկրագործության գիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից թվով 2 հացահատիկային մշակաբույսերի և թվով 1 հատիկաընդեղեն մշակաբույսի սորտեր են ներկայացվել գրանցման օգտագործման թույլտվություն ունեցող սորտերի ցանկում, ինչպես նաև սորտափորձարկման նպատակով</p>		

		<p>ներկայացվել են թվով 4 հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի նոր սորտեր:</p> <p><b>Գյուղատնտեսական մշակաբույսերի տարեկան առնվազն 5 նոր ստեղծված սորտեր և հիբրիդներ՝ բազային տարվա 2 սորտի դիմաց</b></p> <p>«Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից օգտագործման թույլտվություն ունեցող սորտերի ցանկում գրանցելու նպատակով ներկայացվել են թվով 16 բանջարաբոստանային մշակաբույսերի նոր սորտեր, իսկ սորտափորձարկման նպատակով ներկայացված են թվով 1 լոլիկի ջերմատնային հիբրիդ և 1 ոսպի սորտ:</p> <p>«Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2025 թվականին</p> <ul style="list-style-type: none"> <li>• իրականացվել է թվով 195 սորտերի ստուգիչ ցանքերի և դաշտային հետազոտությունների պետական սորտափորձարկումներ,</li> <li>• փորձագիտական խորհրդի անդամների կներկայացվի փորձարկումների արդյունքների վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով 70 նոր սորտեր/հիբրիդներ,</li> <li>• փորձագիտական խորհրդի անդամների կներկայացվի բուծողի իրավունքի գրացման վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով 24 նոր սորտեր:</li> </ul> <p>Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն մասնաճյուղում շարունակվում են ուսումնասիրությունները</p>	<p>2025 թվականին Հայաստանի Հանրապետության օգտագործման թույլտվություն ունեցող սորտերի ցանկում նախատեսվում է ներառել թվով 70 սորտեր:</p> <p>Կատարվել է աշնանացանք՝ բազմաշար գարու բարձր բերքատու նոր սորտի սորտային փորձարկման նպատակով,</p>	
--	--	--	--	--

		<p>կարտոֆիլի մի շարք սորտերի պայթոզենների նկատմամբ դիմադրողականության բարձրացման մոլեկուլային, կենսաբանական մեթոդները ինչպես նաև ցորենի նոր սորտանմուշների ստացման աշխատանքները, որոնք ներառում են դրանց կլիմայակայունության բարձրացման գենետիկական/մոլեկուլյար աշխատանքները գենային ինժեներիայի մեթոդներով:</p> <p><b>Տոհմային կենդանիների տեսակարար կշռի շուրջ 10 % ավելացում՝ բազային տարվա 2 %-ի դիմաց</b></p> <p>Տոհմային գործի բարելավման նպատակով նախարարության կողմից իրականացվում են պետական օժանդակության 3 ծրագրեր, որոնք միտված են արտերկրից համաշխարհային ճանաչում ունեցող դասական ցեղերի տոհմային կենդանիների ներկրման աջակցությանը և կենդանիների մթերատվության բարձրացմանը:</p> <p>Տոհմային տավարաբուծության զարգացման (2019-2024, 2025-2029 թվականների) ծրագրերի շրջանակներում 2025 թվականին դրությամբ հանրապետություն է ներկրվել 2504 գլուխ հոլշտին, սիմենթալ, շվից, ջերսեյ, մոնթեյարդ և անգուս ցեղերի տոհմային երինջներ, որոնցից ստացվել է շուրջ 10000 գլուխ բարձրարժեք սերունդ: Դրան զուգահեռ հանրապետությունում արդեն իսկ առկա շուրջ 11000 գլուխ տոհմային կենդանիներից այդ տարիների ընթացքում ստացվել է ևս շուրջ 48000 սերունդ: Այսպիսով, 2025 թվականին Հանրապետության ընդհանուր գլխաքանակից (476.0 հազար) շուրջ 58.0 հազարը կամ 12.2 %-</p>	<p>որպես սորտագրանցման առաջին գործընթաց: Այն նախատեսվում է գարեջրագործության համար որպես տեղական հումքի աղբյուր: Սորտափորձարկման ընթացքում են նաև պոասասոխի 3 կայուն գծերը:</p> <p>2025 թվականի տարեվերջին հանրապետությունում առկա են շուրջ 58000 գլուխ տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներ: Միաժամանակ ներկրված տոհմային ոչխարներից և հանրապետությունում արդեն իսկ առկա տոհմային կենդանիներից ստացվել են շուրջ 89000 մաքրացել և խառնացել կենդանիներ: Հանրապետության ընդհանուր գլխաքանակից (476.0 հազար) շուրջ 58.0 հազարը կամ 12.2 %-ը կազմում են տոհմային կենդանիները և դրանցից ստացված սերունդը:</p>	
--	--	--	---	--

			<p>ը կազմում են տոհմային կենդանիները և դրանցից ստացված սերունդը:</p> <p>«Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման 2024-2028 թթ. աջակցության» ծրագրի շրջանակներում 2025 թվականին հանրապետություն է ներկրվել 571 գլուխ բարձր պտղատվությամբ և մսային հատկանիշներով օժտված՝ էդիլբակյան և բլանշ ցեղերի տոհմային ոչխարներ և 78 գլուխ զաանենյան և ալպիական ցեղերի տոհմային այծեր: Ներկրված կենդանիներից և մինչ այդ առկա տոհմային կենդանիներից արդեն իսկ ստացվել է բարձր մթերատվությամբ օժտված շուրջ 82 հազար կենդանի, ինչը կազմում է հանրապետությունում 2025 հունվարի 1-ի դրությամբ առկա մանր եղջերավոր կենդանիների ընդհանուր գլխաքանակի (շուրջ 668.0 հազար) 12.3%-ը:</p> <p>Շարունակվում են ՀՀ-ում կաթնային ուղղությամբ այծաբուծության զարգացման գործընթացները՝ ապրանքային տնտեսությունից տոհմայինի անցում կատարելու նպատակով:</p> <p>Տավարաբուծության և ոչխարաբուծության ճյուղերի սելեկցիոն աշխատանքները միտված են կենդանիների նորմալ աճի և զարգացման ապահովմանը, կաթնատվության բարձրացմանը, մատղաշի հնարավորինս անկորուստ աճեցմանը:</p>	<p>- Շուրջ ութ տարի տևողությամբ սելեկցիոն աշխատանքների և ստեղծված տոհմային քարտերի հիման վրա այծաբուծության ճյուղի արմատական բարելավման տեխնոլոգիաների ներդրման արդյունքում Շիրակի մարզի Կրաշենի տնտեսությունը 2025 թվականին ճանաչվեց որպես «տոհմային տնտեսություն»:</p> <p>Արդյունքում իրականացվում է տոհմային մատղաշի (էգ և արու</p>	
--	--	--	--	--	--

		<p><b>Տարեկան շուրջ 20000 արհեստական սերմնավորված գյուղատնտեսական կենդանիներ՝ բազային տարվա 13000-15000-ի դիմաց</b></p> <p>Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ին N 1392-Լ որոշմամբ հաստատված՝ «Մթերատվության բարձրացման փորձնական» ծրագրի իրականացման շրջանակներում 2025 թվականին ՀՀ Արագածոտնի, Սյունիքի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերում արդեն իսկ իրականացվել է շուրջ 21500 կովերի արհեստական սերմնավորում:</p> <p>Հանրապետությունում տավարաբուծության խթանման նպատակով ՀՀ կառավարության 2025 թվականի ապրիլի 10-ի N 419-Լ որոշմամբ հաստատվել է «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության 2025-2028 թվականների» և «Հայաստանի</p>	<p>ուլեր) տրամադրում շահագրգիռ ֆերմերներին:</p> <ul style="list-style-type: none"> <li>- Այծամայրերի կաթնատվության բարձրացում՝ մեկ մայրի կաթնատվությունը լակտացիայի ընթացքում 470 կգ, որը շուրջ 3-4 անգամ գերազանցում է տեղական այծերի ցուցանիշին:</li> <li>- Ոչխարաբուծության և տավարաբուծության ճյուղերում մշակված տեխնոլոգիաների և սելեկցիոն աշխատանքների արդյունքում գրանցվել է բարձր վերարտադրողականություն և արտադրողականության աճ:</li> </ul> <p>2025 թվականին հանրապետությունում իրականացվել է շուրջ 21500 կովերի արհեստական սերմնավորում այդ թվում՝ պետական աջակցության ծրագրի շրջանակներում:</p> <p>ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի N 1392-Լ որոշման N 4 հավելվածով</p>	
--	--	--	---	--

			<p>Հանրապետությունում 2025-2029 թվականների տավարաբուծության զարգացման» ծրագրերը:</p> <p>«Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» 2019-2024 թվականների ծրագիր:</p> <p>ՀԱԱՀ Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի, գենետիկայի և կերակրման հետազոտական կենտրոնում շարունակվում են հետազոտություններ, որոնք միտված են գյուղատնտեսական կենդանիների (տավարի, այծի և ոչխարի) գենոտիպային հատկանիշների կայունացմանը, տնտեսական արդյունավետության բարձրացմանը՝ կաթնային մթերատվության և պտղատվության բարձրացման միջոցով, հոտի որակական կազմի բարելավմանը, ինչպես նաև նպաստելու տոհմային կենդանիների (այծ և ոչխար) որոշակի իրացմանը շահագրգիռ ապրանքային տնտեսություններին:</p>	<p>հաստատված՝ «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության 2025-2028 թվականների» ծրագրի շահառու են հաշվառվել թվով 3 իրավաբանական անձ:</p> <p>Ծրագրի շրջանակում, նախկինում ստանձնած պարտավորությունների արդյունքում կառուցվել և տեխնոլոգիապես ապահովվել է 5 «խելացի» անասնաշենք՝ նախատեսված շուրջ 170 գլուխ ԽԵԿ-ի համար:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հաշվարկվել է ներկրված երկնքների կաթնատվության գենետիկական ներունակությունը, հետազոտվել են առաջին լակտացիայի տնտեսական և կենսաբանական հատկանիշները,</li> <li>2. Իրականացվել է նպատակային աճեցված Ֆլեկվի ցեղի կենդանիների կաթնային մթերատվության քանակական և որակական գնահատումը,</li> <li>3. Ներդրվել է նորածին ուլերի խնամքի, պահվածքի և աճեցման նոր արդյունավետ տեխնոլոգիա,</li> </ol>	
--	--	--	---	---	--

				<p>4. Կատարվել է այժամայրերի ծնի հաշվառում և պտղատվության որոշում,</p> <p>5.Ոչխարաբուծության ոլորտում իրականացվել է ՀԱԱԿ Բալահովտի ուսումնափորձնական տնտեսությունում հայկական կիսանրբագեղմ ցեղի ոչխարների համալիր գնահատում, մատղաշի աճի և զարգացման դինամիկայի հետազոտում,</p> <p>6.ՀԱԱԿ Բալահովտի ուսումնափորձնական տնտեսություն ներկրված Բլանշ ցեղի մսային ուղղության ոչխարների գնահատում և կենտրոնի կողմից վարման տեխնոլոգիաների առաջարկի ներկայացում:</p>	
		<p>4.2 Տեղական սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման միջոցառումների իրականացում</p>	<p><b>Տեղական սերմնաբուծության և սերմնարտադրության իրականացման միջոցով գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի և տնկանյութի առկայության ապահովում</b></p> <p>«Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2025 թվականին հավաստագրվել է տեղական արտադրության 5362.3 տոննա հացահատիկային մշակաբույսերի և 23.24 տոննա բանջարաբոստանային, հատիկաընդեղեն, կերային և յուղատու մշակաբույսերի սերմեր: ՀՀ կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 356-Լ «Բուսաբուծության աջակցության 2025 թվականի» ծրագրի շրջանակներում</p>	<p>2025 թվականին Հայաստանի Հանրապետությունում արտադրվել է 5385.5 տոննա հավաստագրված գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի սերմեր:</p>	

		<p>իրականացվել է 24006.0 հա հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի ցանքեր, այդ թվում՝ սերմնադաշտեր:</p> <p><b>Տնկանյութի հավաստագրման ներդրված համակարգ</b></p> <p>Տնկանյութի հավաստագրման գործընթացի իրականացման նպատակով «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաստիքացուցակում ավելացվել են թվով երկու ագրոնոմի հաստիքներ, որի նպատակով ՀՀ կառավարության 2025 թվականի օգոստոսի 28-ի N 1230-Ն որոշման համաձայն կտրամադրվի տարեկան լրացուցիչ շուրջ 7 մլն դրամ: Ներկայումս տնկանյութի հավաստագրման նպատակով ներկայացված են թվով 5 հայտեր: Մշակվել է «Խաղողի այգիների դաշտային հետազոտության» (Ապրոբացիա) հրահանգի նախագիծը, հնդավորների և կորիզավորների ազգային ստանդարտները, որոնք առաջիկայում կներկայացվեն հաստատման:</p> <p>Տնկարանային տարածքների դաշտային հետազոտողների վերապատրաստման դասընթացների մասնակցության նպատակով հավաքագրվել են հայտեր և «Հայաստանում այգեպտղաբուծության ոլորտի զարգացման նախագիծ» FRUITENIA-2 ծրագրի շրջանակներում «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի» (ICARE) կողմից ս.թ. դեկտեմբերի 15-ից մեկնարկել են դաշտային հետազոտողների վերապատրաստման</p>	<p>Մեկնարկել է տնկանյութի հավաստագրման գործընթացը:</p>	
--	--	--	--	--

դասընթացները՝ համաձայնեցված թեմաների շրջանակներում: GIZ (Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն) ProGress ծրագրի կողմից «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ին տնկանյութի հավաստագրման գործընթացի իրականացման նպատակով տրամադրվել են All-in One PC, Laptop, Thermal transfer or direct thermal label printer, Thermal Transfer Resin Ribbon, Matte Silver Thermal Transfer Label Ribbon, Industrial Thermal Transfer & Direct Thermal label printer, Cordless handheld 1D/2D barcode scanner անվանումներով սարքավորումները: GIZ ProGress ծրագրի կողմից հայտարարվել է ցուցադրական նախագծի՝ տնկարանների կարողությունների զարգացման մրցույթ, որի արդյունքները կամփոփվեն առաջիկայում: Մշակվել է «Խաղողի այգիների դաշտային հետազոտության» (Ապրոբացիա) հրահանգի նախագիծը, հնդավորների և կորիզավորների ազգային ստանդարտները, որոնք առաջիկայում կներկայացվեն հաստատման: Նախատեսվում է դիմել Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) կողմից ֆինանսավորվող SIGMA ծրագրին տնկանյութի հավաստագրման գործընթացում կիրառելու նպատակով հիվանդությունների ախտորոշման GENIE I II III սարքի տրամադրման համար:

**Հյուսվածքային բազմացման (in vitro) մեթոդներով ապահովված կարտոֆիլի**

**շրջանացված լավագույն սորտերի վիրուսազերծ տնկանյութի առկայություն**

Շարունակվում են ՀԱԱՀ Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն մասնաճյուղում հյուսվածքային բազմացման (*in vitro*) մեթոդներով մեծ պահանջարկ ունեցող կարտոֆիլի «Մադելինա» շրջանացված սորտի բուսակների ստացման աշխատանքները, որոնք ադապտացիայի շրջանը անցնում են ջերմատանը ապահովելով մինի պալարներ: Այդ նպատակով՝

1. Ջերմատանը տնկվել են 4000 բուսակներ, որոնցից ստացվող 12000 մինի պալարները կտնկվեն բաց դաշտում սուպեր-սուպեր էլիտա ստանալու համար: Աշնանը ստացված շուրջ 4000 պալարները գտնվում են պահեստավորման փուլում: Դրանք բոլորը 2026 թվականի գարնանը կփոխադրվեն դաշտ՝ սուպեր-սուպեր էլիտա պալարներ ստանալու նպատակով,

2. ՌԴ-ի Լորխի անվան ինստիտուտից ստացված կարտոֆիլի 9 նոր բարձրարդյունավետ սորտերը առաջին սորտափորձարկումն անցան Արարատյան դաշտում (ուշ ամառային), իսկ Ստեփանավանում 2026 թվականին կշարունակվեն դրանց կլիմայավարժեցման աշխատանքները: Լաբորատոր պայմաններում սկսվել է դրանցից *in vitro* եղանակով բուսակների բազմացումը՝ մինի պալարներ ստանալու համար:

Շարունակվում են ևս 4 կարտոֆիլի (մեծ պահանջարկ ունեցող) սորտերի (*in vitro*) կտրոնավորման և բազմացման լաբորատոր աշխատանքները, որոնք շարունակական

9 սորտի սուպեր էլիտայի տնկանյութից 2025 թվականին ստացվել է էլիտա, որը պահեստավորվել է:

3000 մինի պալարներից 2025 թվականին ստացվել են 9000-10000 պալար, որը պահեստավորվել է 2026 թվականին էլիտա ստանալու նպատակով:

		<p>4.3 Գյուղատնտեսական տեխնիկայի և ագրոպարենային ոլորտի սարքավորումների արդիականացում</p>	<p>թնույթ են կրում՝ սերմնաբուծական ցիկլը շարունակելու նպատակով:</p> <p>ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում շարունակվում է մատչելի մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրումը գյուղատնտեսությանը զբաղվող տնտեսավարողներին:</p> <p>ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում շարունակվում է մատչելի մեխանիզմների կիրառմամբ ագրոպարենային ոլորտի սարքավորումների տրամադրումը տնտեսավարողներին:</p>	<p>Ծրագրի շրջանակում 2025 թվականին ձեռք է բերվել 1219 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում 333 միավոր տրակտոր և 2 միավոր կոմբայն: Լիզինգի գումարը կազմել է շուրջ 5 մլրդ դրամ, ծրագրի մեկնարկից տրամադրված լիզինգի համար սուբսիդիայի գումարը կազմել է շուրջ 957 մլն դրամ:</p> <p>Ծրագրի շրջանակներում 2025 թվականին հաստատվել է 165 լիզինգի հայտ շուրջ 6.9 մլրդ դրամ ծավալով, որոնց շրջանակներում ձեռք է բերվել 422 միավոր սարքավորում, իսկ տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 2.9 մլրդ դրամ:</p> <p>Ծրագրի մեկնարկից մինչև 2025 թվականին հաստատվել է 1366 լիզինգի հայտ շուրջ 54.1 մլրդ դրամ չափով, որոնց շրջանակներում ձեռք է բերվել 3582 միավոր սարքավորում, իսկ տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 13.9 մլրդ դրամ:</p>	
	<p>4.4 Անասնաբուծության և թռչնաբուծության</p>	<p><b>Ներդրված և գործարկված գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման համակարգ՝</b></p>			

		<p>զարգացման միջոցառումների իրականացում</p>	<p><b>Երեք տարիների ընթացքում նախատեսվում է 739500 համարակալման միջոցառման իրականացում</b></p> <p>«Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում» ծրագրի շրջանակներում 2024 թվականի մայիսի 30-ի N 818-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը և միջոցառումների կատարման ժամանակացույցը»:</p> <p><b>Ստեղծված անասնաբուժական առնվազն մեկ խոշոր համալիր՝ ՀՀ անասնաբուժության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագրի շրջանակներում (ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 3-ի N 276-Լ որոշում)</b></p> <p>Պարենային անվտանգության և անասնաբուժական արտադրանքի ինքնաբավության մակարդակի բարձրացման, անասնաբուժության ճյուղում ներդրումների ավելացման, տեղական արտադրության խթանման, ճյուղի գրավչության մակարդակի բարձրացման նպատակով ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 3-ի N 276-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ անասնաբուժության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագիրը:</p>	<p>2025 թվականին համարակալվել է 1 028 351 գլուխ, որից 162 981 գլուխ խոշոր և 865 370 գլուխ մանր եղջերավոր կենդանի:</p> <p>Ծրագրի շրջանակում 2025 թվականին կնքվել է թվով 1 պայմանագիր՝ խոզաբուծության ուղղությամբ 3.5 մլրդ դրամ ծավալի ներդրում կատարելու համար: 2025 թվականին փոխհատուցում չի տրամադրվել:</p> <p>ՀՀ կառավարության աջակցության ծրագրերի շրջանակներում ՀՀ Արմավիրի մարզի Արաքս բնակավայրում 2025 թվականին գործարկվեց «ՄԻԼԿԱԹ» ՍՊԸ-ի կաթնային համալիրը, որում մեքենայացված</p>	
--	--	---	--	--	--

			<p><b>Ստեղծված թռչնաբուծական տոհմային տնտեսություն և ընդլայնված գործող թռչնաֆաբրիկաներ՝ ՀՀ անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագրի շրջանակներում (ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 3-ի N 276-L որոշում)</b></p> <p>Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 3-ի N 276-L որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրին աջակցության տրամադրման փորձնական» ծրագրի շրջանակներում թռչնաբուծության ուղղությամբ ներդրումներ իրականացնելու նպատակով մասնակցության պայմանագիր է կնքվել թվով 3 ընկերությունների հետ: Համաձայն վերջիններիս կողմից ներկայացված ներդրումային նախագծերի՝ ընդհանուր նախատեսվող ներդրումների ծավալը կազմում է 19.6 մլրդ ՀՀ դրամ:</p>	<p>են բոլոր արտադրական գործընթացները: Համալիրում բուծվում են սիմենթալ ցեղի տոհմային կենդանիներ, որի շնորհիվ տարեկան լրացուցիչ կարտադրվի 300 տոննա կաթ:</p> <p>«Արաքս թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ի և «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ»-ի կողմից սկսվել են թռչնաբուծարանների կառուցման աշխատանքները:</p> <p>Սպիտակի թռչնաբուծարանում ձևավորվել է տոհմային մայրական կազմ՝ տեղական վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:</p>	
	<p>4.5 Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագրի իրականացում</p>		<p>«Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն» ծրագրի շրջանակներում 2025 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից բույսերի հիվանդությունների, վնասատուների և</p>	<p>Բույսերի պաշտպանության իրականացված միջոցառումների հիման վրա վնասատու օրգանիզմներին հասցված վնասի կրճատված տարածման արեալ:</p>	

			<p>մկնանման կրծողների հայտնաբերման նպատակով, Հայաստանի Հանրապետության համայնքների 180000 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում իրականացվել են մոնիթորինգի աշխատանքներ, որոնց արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետության մարզերի առավել վարակված շուրջ 100037 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում մկնանման կրծողների, ծղրիդների դեմ պայքարի աշխատանքներ իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության մարզերին անհատույց տրամադրվել են մկնասպան և միջատասպան թունանյութեր:</p>		
	<p>4.6 Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման ծրագրի իրականացում</p>		<p><b>Տարեկան շուրջ 80%-ով բարձրացված գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվություն</b></p> <p>2025 թվականի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից ագրոքիմիական հետազոտություն է իրականացվել թվով 85 համայնքում: Նմուշների քանակը կազմել է 15573 հատ:</p> <p><b>Բարելավված գյուղատնտեսական նշանակության հողերի վիճակ՝ տարեկան 85 համայնքներին ագրոքիմիական քարտեզների տրամադրման միջոցով</b></p> <p>Հողում մակրո- և միկրոտարրերի քանակների ճշտման նպատակով իրականացված փորձաքննությունների քանակը կազմել է 39400 հատ: Հաշվետու</p>	<p>Ագրոքիմիական հետազոտություն է իրականացվել թվով 85 համայնքում: Նմուշների քանակը կազմել է 15573 հատ:</p> <p>Փորձաքննությունների քանակը կազմել է 39401 հատ:</p>	

			<p>ժամանակաշրջանում կազմվել է 85 ագրոքիմիական քարտեզ:</p>		
	<p>4.7 Մատուցվող անասնաբուժական ծառայությունների ընդլայնում, բարելավում և մարզային լաբորատորիաների վերազինում</p>	<p>ՀՀ Լոռու, Արմավիրի, Շիրակի և Գեղարքունիքի մարզային կենտրոններում կատարվել են լաբորատորիաների վերանորոգման աշխատանքներ, որի արդյունքում լաբորատոր փորձարկումները կկատարվեն համապատասխան կոմունալ պայմաններում՝ ջեռուցում, ջրամատակարարում, ջրահեռացում և այլն:</p> <p>Հայաստանի Հանրապետությունում իրականացվող գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծրագրի շրջանակներում իրականացվում են ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումներ:</p> <p>ՀԱԱՀ Անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոնում շարունակվում են աշխատանքները վարակիչ և ոչ վարակիչ հիվանդություններով կենդանիների ախտահարվածության և ստացված մթերքի սննդային պիտանելիության որոշման ուղղությամբ:</p>	<p>Կայուն անասնահամաճարակային վիճակի ապահովման նպատակով, 2025 թվականի ընթացքում «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում իրականացվել է 6 619 725 հատ միջոցառում, որից ախտորոշիչ՝ 740 445 հատ և կանխարգելիչ՝ 5 879 280 հատ:</p> <p>ՀԱԱՀ Բալասիկի տի ուսումնափորձնական տնտեսությունում իրականացվել է հայկական կիսանրբագեղմ ցեղի ոչխարների համալիր գնահատում, մատղաշի աճի և զարգացման դինամիկայի հետազոտում:</p>		
	<p>4.8 Հողային ռեսուրսների նպատակային և ջրային ռեսուրսների խնայողական ու</p>		<p><b>Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թվականների ծրագիրն իրականացված է</b></p>		

		<p>արդյունավետ օգտագործում</p>	<p>Կառավարության կողմից ընդունվել է Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության ծրագրում փոփոխություններ կատարելու մասին 2025 թվականի նոյեմբերի 20-ի N 1625-Լ որոշումը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է առնվազն 3 հա գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման դեպքում փոխհատուցել ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ պայմանագիր կնքելուց հետո ձեռք բերված առանձին գույքային միավոր հանդիսացող հողամասերի կադաստրային արժեքի 50%-ի չափով, ընդ որում՝ աջակցությունը տրամադրվում է ոչ ավելի, քան 200 հա-ի (ներառյալ) համար: Միավորված հողամասի ընդհանուր մակերեսում՝ առանձին գույքային միավոր հանդիսացող հողամասերի միավորների քանակը պետք է լինի 3-30 հա միավորված հողամասի դեպքում առնվազն 5 միավոր, 30-100 հա միավորված հողամասի դեպքում առնվազն 10 միավոր, 100-200 հա միավորված հողամասի դեպքում՝ առնվազն 20 միավոր:</p> <p><b>Ոռոգման առաջադիմական ջրախնայող տեխնոլոգիաներով ոռոգելի հողատարածքներն ավելացված են շուրջ 3000 հա-ով</b></p> <p>Ոռոգման առաջադիմական ջրախնայող տեխնոլոգիաներով ոռոգելի հողատարածքների ավելացված են շուրջ 3000 հա-ով:</p>	<p>Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2026 թվականների ծրագրի շրջանակում 2025 թվականին կնքվել է 11 պայմանագիր՝ 810 հա ընդհանուր մակերեսով հողերի միավորման համար, որից 2 պայմանագիր՝ 30-100 հա, 2 պայմանագիր՝ 100-200 հա և 7 պայմանագիր՝ 5-30 հա մակերեսով հողերի միավորման նպատակով:</p> <p>Ինտենսիվ այգեգործության ծրագրերի շրջանակում հիմնվել է 1365 հա ինտենսիվ այգի (ոռոգման պարտադիր բաղադրիչով) և միայն ոռոգման բաղադրիչով 47 հա ընդհանուր</p>	
--	--	--------------------------------	--	--	--

			<p>«Հ կառավարության և Չարգացման ֆրանսիական գործակալության միջև «Հայաստան-Ռոզվոլդ գյուղատնտեսության զարգացում Արարատի և Արմավիրի մարզերում» ծրագրի նպատակն է՝ աջակցել ՀՀ կառավարությանը ոռոգման ոլորտի ընթացիկ բարեփոխումների իրականացման հարցում: Ծրագրի շրջանակում նախատեսվում է ներդնել արդի կաթիլային ոռոգման համակարգ՝ մինչև 1100 հա հողատարածքում: Ծրագրի շրջանակներում ընտրված թիրախային տարածքներում՝ Արմավիրի մարզի Նորակերտ և Բաղրամյան բնակավայրերում, և Արարատի մարզի Արարատ, Այգավան, Գոռավան, Ավշար, Դաշտաքար, Վեդի, Նոյակերտ, Սիսավան, Ուրցաձոր բնակավայրերում նախատեսվում է իրականացնել հողերի կոնսոլիդացիայի առնվազն 10 միջոցառում:</p>	<p>մակերեսով հողատարածքներում ներդրվել են ոռոգման արդիական ջրախնայող համակարգեր: Մինևույն ժամանակ, հաստատվել է 1399 հա այգեհիմնման հայտ (ոռոգման պարտադիր բաղադրիչով), իսկ միայն ոռոգման արդիական համակարգերի ներդրման բաղադրիչով հաստատվել է շուրջ 307 հա-ի հայտ:</p> <p>«Հայաստան-Ռոզվոլդ գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» ծրագրի շրջանակում Վեդիի ջրամբարի ջրի ֆիլտրման և ճնշման կարգավորման նպատակով՝ կառուցապատվել և սարքավորումներով կահավորվել են 9 ֆիլտրացիոն կայաններ: Աշխատանքներ են տարվում ֆերմերային տնտեսությունների հետ՝ հողերի միավորման, կոոպերատիվների հիմնադրման, ցուցադրական ֆերմերային տնտեսությունների հիմնման և ոռոգման բարելավման նոր մեթոդների ներդրման նպատակով: Ընտրվել են 20 տնտեսություններ, որոնցում նախատեսվում է ստեղծել ցուցադրական</p>	
--	--	--	---	--	--

			<p>Ջրային կոմիտեն իր իրավասության սահմաններում շարունակաբար իրականացնում է գործող ոռոգման համակարգերի բարելավման, ինչպես նաև նոր համակարգերի կառուցման ծրագրեր: Ջրային ռեսուրսների խնայողական ու արդյունավետ օգտագործման նպատակով 2021 թվականի հոկտեմբերի 14-ին ընդունվել է ՀՀ կառավարության N 1695-Լ որոշմամբ հաստատվել է «Մինչեվ 3 հա հողատարածքներում կաթիլային, անձրեվացման ոռոգման համակարգերի ներդրման դեպքում ջրօգտագործողներին ոռոգման ջրի վարձավճարի փոխհատուցման ծրագիրը», որի նպատակն է աջակցել ծրագրին մասնակցող շահառուներին՝ ոռոգման ջրի վարձավճարի փոխհատուցմամբ՝ ծրագրի մեկնարկից հետո 5 տարի ժամկետով:</p>	<p>Ֆերմաներ՝ յուրաքանչյուրին 5 մլն ՀՀ դրամ համաֆինանսավորմամբ: Ծրագրի շրջանակում ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում ձևավորվել են գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունների 3 թիմեր (AEST): Վերջիններիս միջոցով կազմակերպվում են ուսուցողական այցեր դեպի ցուցադրական ֆերմաներ</p> <p>2025 թվականին Ծրագրի շահառու են դարձել թվով 3 ջրօգտագործող, որի արդյունքում բարելավված հողատարածքների փաստացի չափը կազմում է՝ շուրջ 8 հեկտար:</p>	
5	Ապրանքների ներմուծման ռիսկերի	5.1 Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունների	-ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային կազմակերպության աջակցությամբ և «Ամերիա» խորհրդատվական ընկերության		

<p>կանխատեսում և պաշարների վաղաժամ կուտակում: Ներմուծվող ապրանքների մատակարարում ների խափանումների ռիսկերի նվազեցում</p>	<p>իրականացում, ներառյալ ներմուծվող ապրանքների լոգիստիկ խափանումներով պայմանավորված անբավարարության վաղաժամ կանխատեսում և կանխարգելում</p>	<p>կողմից իրականացվել Տվյալահեն էկոնոմետրիկ կանխատեսման մոդելի և վաղ նախազգուշացման վահանակի մշակում (Early warning System), որի նպատակն է հնարավորություն տալ Հայաստանի Հանրապետության Կառավարությանը կանխատեսել սոցիալ-տնտեսական ցնցումները, գնահատել դրանց ազդեցությունը տնային տնտեսությունների եկամուտների, պարենային անվտանգության և խոցելի խմբերի վրա, ինչպես նաև ընդունել հիմնավորված որոշումներ և իրականացնել համապատասխան գործողություններ:</p> <p>Սույն թվականի դեկտեմբերի 12-ին ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվեց Գործիքի ցուցադրական փորձարկումը (սիմուլյացիա):</p> <p>- ԱՄՆ գյուղդեպարտամենտի կողմից իրականացվել է ցորենի արժեշղթայի խորը վերլուծություն: 2025 թվականի դեկտեմբերի 10-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում կայացել է հանդիպում ԱՄՆ գյուղատնտեսության քարտուղարության գյուղատնտեսական հարցերով տարածաշրջանային կցորդ Ռիշան Չոդիրիի գլխավորած պատվիրակության հետ: Հանդիպման ընթացքում ներկայացվել են ցորենի արժեշղթայի վերաբերյալ ԱՄՆ գյուղատնտեսական դեպարտամենտի և Կանգասի համալսարանի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքները: Քննարկվել են Հայաստանի ցորենի արտադրության և մատակարարման ներկա իրավիճակը, տեղական</p>		
--	--	--	--	--

			<p>արտադրության ընդլայնման և ոլորտի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունները:</p>		
6	<p>Ռազմավարական գործընկերությունների հետ ինստիտուցիոնալ և անխափան կապերի հաստատում և ամրապնդում, արտաքին և ներքին մարտահրավերներին դիմակայելու պատրաստ համալրված նյութական պահուստի ձևավորում</p>	<p>6.1 Մասնակցություն ռազմավարական գործընկերությունների նյութական պահուստների կառավարումն իրականացնող գործադիր մարմինների միջև տարբեր ձևաչափերով ընթացող ինտեգրացիոն գործընթացներին</p>	<p>Ներքին գործերի նախարարության պետական ռեզերվների գրասենյակը հանդիսանում է ԱՊՀ երկրների մասնակից պետությունների նյութական պահուստի կառավարում իրականացնող պետական (գործադիր) իշխանության մարմինների ղեկավարների Կոնսուլտատիվ Խորհրդի անդամ: Իրականացվել է ԱՊՀ անդամ պետությունների բազային կազմակերպությունների նյութական պահուստի համակարգերի գիտատեխնիկական զարգացման, կադրերի վերապատրաստման և ուսուցման կազմակերպման ոլորտներում աշխատանքային պլանի նախագծի քննարկում: ԱՊՀ երկրների մասնակից պետությունների նյութական պահուստի կառավարում իրականացնող պետական (գործադիր) իշխանության մարմինների ղեկավարների Կոնսուլտատիվ Խորհրդի կողմից հաստատվել է ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության իրականացման երկրորդ փուլի (2026-2030թթ) գործողությունների պլանը:</p>	<p>2025 թվականի սեպտեմբերին կայացած Կոնսուլտատիվ Խորհրդի նիստի ժամանակ ՆԳՆ պետական ռեզերվների գրասենյակի ղեկավարը հանդես է եկել ելույթով՝ ներկայացնելով նյութական պահուստի ոլորտային խնդիրները, մասնավորապես՝ հացահատիկի պահեստավորման և պահպանման վերաբերյալ: Քննարկումների արդյունքում Ռուսաստանի Դաշնության Ռոսռեզերվի նյութական պահուստի պահպանման խնդիրների հետազոտման ինստիտուտի կողմից ՆԳՆ պետական ռեզերվների գրասենյակին տրամադրվեց հացահատիկի պահեստավորման և պահպանման վերաբերյալ մեթոդական գրականություն, միաժամանակ պատրաստակամություն հայտնվեց աջակցել տեխնիկական սպասարկման և մասնագետների պատրաստման և որակավորման հարցում: ԱՊՀ երկրների մասնակից պետությունների նյութական պահուստի կառավարումն իրականացնող պետական</p>	

				<p>(գործադիր) իշխանության մարմինների ղեկավարների XXII Կոնսուլտատիվ Խորհրդի հաջորդ նիստը կանցկացվի Տաջիկիստանի Հանրապետության մայրաքաղաք Դուշամբեում:</p> <p>Խորհրդի փոխնախագահ է ընտրվել Ներքին գործերի նախարարության պետական ռեզերվների գրասենյակի ղեկավարը:</p>	
	<p>6.2 Նյութական պահուստում ներառված նյութական արժեքների անվանացանկերի վերանայում՝ բուսական յուղի, շաքարի և եգիպտացորենի (որպես անասնակեր) պարտադիր ներառմամբ:</p>	<p>Մշակվել է Նյութական պահուստի նոր մոդելի հայեցակարգի նախագիծը, որտեղ ներառված է նյութական պահուստի պաշարի ծավալների, դրանց ձևավորման, պահպանման և թարմացմանն ուղղված մեխանիզմների և ընթացակարգի, ինչպես նաև նյութական պահուստում ներառված նյութական արժեքների անվանացանկում բուսական յուղի, շաքարի և եգիպտացորենի (որպես անասնակեր) պարտադիր ներառման անհրաժեշտության մասին:</p>	<p>Մշակվել է Նյութական պահուստի նոր մոդելի հայեցակարգի նախագիծը, որտեղ ներառված է նյութական պահուստի պաշարի ծավալների, դրանց ձևավորման, պահպանման և թարմացմանն ուղղված մեխանիզմների և ընթացակարգի, ինչպես նաև նյութական պահուստում ներառված նյութական արժեքների անվանացանկում բուսական յուղի, շաքարի և եգիպտացորենի (որպես անասնակեր) պարտադիր ներառման անհրաժեշտության մասին:</p>		
	<p>6.3 Նյութական պահուստի կանոնակարգման օրենսդրական դաշտի վերանայում՝ պահուստի պաշարի ծավալների, դրանց ձևավորմանը, պահպանմանը և թարմացմանն ուղղված մեխանիզմների և ընթացակարգերի</p>		<p>Ներկայումս նախագիծը լրամշակման փուլում է, որի ավարտից հետո կներկայացվի Փոխվարչապետ Միեր Գրիգորյանի աշխատակազմ:</p>		

		վերանայում:			
7	Պատրաստի սննդի կորուստների կրճատում	7.1 Ճիշտ և առողջ սնուցման, ինչպես նաև պատրաստի սննդի կորուստների իրազեկման արշավների իրականացում	<p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից 2025 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.</p> <ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ մարզերի դպրոցների խոհարարների կարողությունների հզորացման դասընթացներ, որոնց ընթացքում մասնակիցները ուսումնասիրել են թափոնների կառավարման, պատրաստի սննդի կորուստների կրճատման թեման: Դասընթացներին մասնակցել են դպրոցական 250 խոհարար:</li> <li>- Շարունակվել են «Նորարար ջերմատուն» և «Նորարար այգի» խմբակների աշխատանքները:</li> <li>- ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (WFP) համագործակցությամբ իրականացվող «Կաթը դպրոցներին. Լոռի և Երևան» ծրագրի շրջանակում 2025 թվականի մայիսին ծրագրի շահառու դպրոցներում (Մեծավանի թիվ 1 միջնակարգ դպրոց, Ստեփանավանի թիվ 3 հիմնական դպրոց, Տաշիրի թիվ 1 հիմնական դպրոց, Տաշիրի Արտակ Աղեկյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց, Ստեփանավանի Սուրդ Գրիգոր Լուսավորչի անվան թիվ 2 հիմնական դպրոց, Ստեփանավանի Վ. Թեքեյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոց) կազմակերպվել են «Կաթի ուժը» խորագրով ուսուցողական տիկնիկային ներկայացումներ, որոնց նպատակն էր գեղարվեստական ժամանցային արտահայտչամիջոցներով ամրապնդել</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Վերապատրաստվել է 250 խոհարար:</li> <li>- 11 դպրոցների «Նորարար ջերմատուն» խմբակում ուսանել է 120 աշակերտ:</li> <li>- 17 դպրոցների «Նորարար այգի» խմբակում ուսանել է 184 աշակերտ:</li> <li>- Ինտերակտիվ գրույց-քննարկմանը մասնակցել են 13-17 տարեկան 40 երիտասարդներ:</li> <li>- «Խոհարարություն հանուն փոփոխության. Առողջ Բրդուջ» մրցույթին մասնակցել են 16 երիտասարդ:</li> </ul>	

			<p>երեխաների գիտելիքները կաթի սննդարար արժեքի և առողջ կենսակերպի մասին:</p> <p>- ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, համագործակցելով ԱՀԿ Հայաստանի գրասենյակի և ՄԱԿ-ի հայաստանյան թիմի հետ, Արագածոտնի մարզի երիտասարդների համար կազմակերպել է ինտերակտիվ գրույց-քննարկում, ինչպես նաև «Խոհարարություն հանուն փոփոխության. Առողջ Բրդուջ» մրցույթը: Միջոցառումն անցկացվել է օգոստոսի 12-ին՝ Երիտասարդության միջազգային օրվա շրջանակում իրականացվող մյուս նախաձեռնությունների հետ մեկտեղ, 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք Ապարանում:</p> <p>- Քննարկմանը ներգրավված են եղել 13-17 տարեկան 40 երիտասարդներ: Երկու փորձագետների ինտերակտիվ ձևաչափով ներկայացված թեմաներից մեկը վերաբերել է առողջ ապրելակերպին՝ մասնավորապես առողջ սովորությունների ձևավորմանը:</p> <p>Հայտնի խոհարարի և սննդաբանի համակարգմամբ անցկացվել է «Խոհարարություն հանուն փոփոխության. Առողջ Բրդուջ» մրցույթը, որին մասնակցել են 16 երիտասարդներ: Մրցույթի նպատակն էր խթանել առողջ ու կայուն սննդի մշակույթը՝ խոհարարական ստեղծագործականության միջոցով՝ համահունչ «առողջ ափսեի» սկզբունքին:</p> <p>Նրանք հնարավորություն ունեցան ոչ միայն ստանալու օգտակար գիտելիքներ, այլև զարգացնելու սեփական հմտությունները՝ առողջ ապրելակերպի ձևավորման ուղղությամբ:</p>		
--	--	--	---	--	--

		<p>7.2 Դպրոցական սնունդ ծրագրի կրթական ենթաբաղադրիչում պատրաստի սննդի կորուստների կրճատման թեմայի ընդգրկում</p>	<p>1. «Դպրոցական սնունդ» ծրագրի կրթական ենթաբաղադրիչում ներառելու նպատակով ԴՍԵԲ հիմնարկի կողմից ուսումնասիրվում է թափոնների կառավարման, պատրաստի սննդի կորուստների կրճատման թեման: Այդ նպատակով աշխատանքներ են տարվել պատրաստի սննդի կորուստների կրճատման թեմայի մշակման համար փորձագետների ներգրավվելու ուղղությամբ:</p> <p>Պատրաստվել է պատրաստի սննդի թափոնների կառավարման ուղեցույցի կոմպոստացման հատվածը:</p> <p>2025 թվականի ընթացքում, օրենսդրական կարգավորման նպատակով, պատրաստի սննդի կորուստների կրճատման վերաբերյալ նախագիծը գտնվում է մշակվման փուլում:</p> <p>2. ԴՍԵԲ հիմնարկի կողմից 2023-2024 ուստարում մշակվել են «Նորարար այգի», «Նորարար ջերմատուն» խմբակների ուսումնական ծրագրերը, որոնք երաշխավորվել են ԿԳՄՍՆ կողմից:</p> <p>Հաստատված ծրագրերով ԴՍԵԲ հիմնարկի աջակցությամբ 2023 թվականի սեպտեմբերից մարզերի 28 դպրոցներում ներդրվել են խմբակներ: Խմբակների ուսումնական ծրագրում ներառվել է «Շրջանաձև տնտեսություն գաղափարն ու ազդեցությունը գյուղատնտեսության բնագավառում» թեման, մասնավորապես առանձին 2 ժամ է հատկացվել կոմպոստացման կարևորությանը և դրա պատրաստման գործնական հմտություններին:</p>	<p>Պատրաստի սննդի թափոնների կառավարման ուղեցույցի կոմպոստացման հատվածը պատրաստ է:</p> <p>Հանրապետության 28 դպրոցներում ներդրված է «Նորարար այգի» և «Նորարար ջերմատուն» խմբակները:</p>	
--	--	---	--	---	--

**2. Պարենի մատչելիություն**

8	<p>Սննդամթերքի գնաճի ցածր և կայուն մակարդակի ապահովում</p>	<p>8.1 Գնաճի ցածր և կայուն մակարդակի ապահովում</p>	<p>Կենտրոնական բանկը մշակում և իրականացնում է դրամավարկային քաղաքականություն՝ ուղղված երկրում գների կայունության նպատակի իրագործմանը: Վերոնշյալ նպատակի իրագործման շրջանակներում, այդ թվում հանրային հաշվետվողականության ապահովման համատեքստում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը եռամսյակային պարբերականությամբ պատրաստում և հրապարակում է գնաճի հաշվետվություններ (2025 թվականի չորրորդ եռամսյակի գնաճի հաշվետվությունը հրապարակվել է ս.թ. դեկտեմբերի 16-ին): Նշված փաստաթուղթը պարունակում է Ռազմավարության համապատասխան նպատակի իրագործման մասով անհրաժեշտ տեղեկատվություն:</p>	<p>2025 թվականի չորրորդ եռամսյակում 12-ամսյա գնաճը դանդաղել է՝ նոյեմբերին կազմելով 3.1%, իսկ պարենային ապրանքների 12-ամսյա գնաճը՝ 4.1%:</p>	
9	<p>Բնակչության գնողունակության մակարդակի բարձրացում</p>	<p>9.1 Նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև նպաստների և սոցիալական այլ վճարների չափերի վերանայման նպատակով ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան ըստ տարիքային խմբերի նվազագույն պարենային զամբյուղի հաշվարկում և հաստատում</p>	<p>2025 թվականի հուլիսի 3-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարի N Հ/2761-2025 հրամանով հաստատվել է Նվազագույն պարենային զամբյուղի հաշվարկման նպատակով միջգերատեսչական աշխատանքային խմբի կազմը, որում ներառվել են էկոնոմիկայի, Առողջապահության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, Վիճակագրական կոմիտեի, ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի և Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ներկայացուցիչները և ազգային փորձագետը: Նվազագույն պարենային զամբյուղի ձևավորման նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության ակտիվ համագործակցության արդյունքում ներգրավվել են նաև</p>	<p>Կազմվել է Նվազագույն պարենային զամբյուղների միջազգային արժեքների կիրառվող մոդելների վերլուծություն, նվազագույն պարենային զամբյուղի նախնական տարբերակ և դրանք Հայաստանում ներդնելու վերաբերյալ առաջարկություններ, ինչպես նաև արտակարգ իրավիճակների զամբյուղի 2 մոդել, որոնք ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ:</p>	

			<p>ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գլխամասային կենտրոնի փորձագետները:</p> <p>ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի սննդային շղթաների ռիսկի գնահատման տեղեկատվական-վերլուծական կենտրոնի (Կենտրոն) կողմից առաջին անգամ, հիմնվելով սննդի անհատական սպառման տվյալների վրա, իրականացվել են ուսումնասիրություններ՝ ուղղված ՀՀ չափահաս բնակչության սնման կարգավիճակի՝ մակրոսնդանյութերի (սպիտակուց, ճարպ, ածխաջուր) ընդունման գնահատմանը:</p>	<p>ՀՀ չափահաս բնակչության կողմից մակրոսնդանյութերի (սպիտակուց, ճարպ, ածխաջուր) ընդունման վերաբերյալ գիտահեն տվյալներ: Տվյալներն ամփոփվել են միջազգային գիտաժողովին ներկայացված արստրակտում և գիտական հոդվածում, որը ներկայացվել է ազդեցության գործակից ունեցող միջազգային պարբերականում տպագրության:</p>	
10	<p>Բնակչության սոցիալական ապահովվածության և սոցիալապես խոցելի խմբերի հուսալի պաշտպանվածության ապահովումը</p>	<p>10.1 Շոկային իրավիճակների արձագանքող սոցիալական պաշտպանության ծրագրի ներդրում (սոցիալական շտապօգնություն), ներառյալ՝ համապետական մասշտաբի սննդային քարտերի համակարգի գործարկում</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հունիսի 5-ի N 71-Ա/1 հրամանով Հայաստանի Հանրապետությունում գործարկվել է «Սոցիալական շտապ օգնություն» դրամաշնորհային ծրագիրը: Դրամաշնորհը տրամադրվում է կազմակերպությանը, որը պետք է համագործակցի նախարարության պատասխանատու ստորաբաժանման, Միասնական սոցիալական ծառայության և դրա տարածքային կենտրոնների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ, հավաքագրի անհրաժեշտ ապրանքատեսականի (բնահրային), պահեստավորի այն և կազմակերպի դրանց բաշխումը սոցիալապես անապահով, դրա կարիքն ունեցող ընտանիքներին:</p> <p>2025 թվականին միջոցառումը շարունակվել է իրականացվել «Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամի կողմից:</p>	<p>2025 թվականին նախատեսվել է 702 ընտանիքի տրամադրել աջակցություն, որից առնվազն 500-ը՝ սննդային քարտի աջակցության տարբերակով: 2025 թվականի դեկտեմբերի 22-ի դրությամբ աջակցություն է տրամադրվել 778 ընտանիքների, այդ թվում 500-ը՝ սննդային քարտերի տեսքով:</p>	

			<p>Ծրագրի իրականացման արդյունքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, անհետաձգելի օգնության կարիք ունեցող անձանց (ընտանիքներին) տրամադրվել է բնախրային օգնություն, ինչպես նաև սննդային քարտեր՝ գնահատված կարիքների հիման վրա: Կարիքները գնահատվում են նախօրոք մշակված պարենային անապահովության հարցաշարի միջոցով: Փաթեթների պարունակությունը, չափաքանակը և արժեքը նախապես համաձայնեցնվում են Նախարարության պատասխանատու ստորաբաժանման հետ և բաշխվում են ըստ ընտանիքի անդամների թվի, կազմի և գնահատված կարիքի:</p> <p>2025 թվականին ծրագիրն իրականացվում է Երևանում և 6 մարզերում (Շիրակի, Գեղարքունիքի, Արմավիրի, Տավուշի, Կոտայքի և Սյունիքի մարզերում): ՀՀ պետական բյուջեից միջոցառման իրականացման համար 2025 թվականին հատկացվել է 27,059.500 դրամ: 2026 թվականին ծրագիրը կիրականացվի ՀՀ ամբողջ տարածքում:</p>		
	<p>10.2 Անապահովության գնահատման նոր համակարգի ներդրում</p>		<p>ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշմամբ 2025 թվականի մարտի 17-ից ՀՀ Կոտայքի և Սյունիքի մարզերում փորձնական ներդրվել է ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգ, որը 2026 թվականին կներդրվի ամբողջ հանրապետությունում:</p> <p>Գնահատման համակարգի հիման վրա նշանակվող անապահովության նպաստի տրամաբանության շրջանակներում ծայրահեղ անապահով ճանաչված ընտանիքները կունենան նվազագույն երաշխավորված</p>	<p>Գնահատման նոր համակարգով 2025 թվականի դեկտեմբերի դրությամբ անապահովության նպաստ է ստացել 720 ընտանիք, իսկ եռամսյա հրատապ օգնություն՝ 296 ընտանիք:</p>	

			<p>եկամուտ՝ պարենային զամբյուղի չափով: Ընդ որում, առավել խոցելի ընտանիքների համար նախատեսված են նաև հավելումներ:</p>		
		<p>10.3 Սոցիալական առաջնային կարիքների բավարարմանն ուղղված ոչ ֆինանսական ծառայությունների տրամադրում,</p>	<p>1. «Սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» միջոցառման հիմնական նպատակն է սննդի կազմակերպումը Նախարարության ՄՍԾ տարածքային կենտրոնի կողմից ուղեգրված անձանց՝ անհատական սոցիալական ծրագրի համաձայն:</p> <p>«Վ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 984-Ն որոշմամբ սահմանված են սոցիալապես անապահով շահառուների խմբերը, ցերեկային սննդի կազմակերպման կարգը, պայմանները, չափորոշիչները, մասնագետների հաստիքային միավորները: Ծառայությունը տրամադրվում է ճաշարանում՝ օրական մեկ անգամ՝ ժամը 12:00-15:00 ընկած ժամանակահատվածում շաբաթական հինգ օր հաճախականությամբ (տաք ճաշ՝ առաջին և երկրորդ կերակրատեսակով, կամ չոր մթերաբաժնի ձևով):</p> <p>Միջոցառումն իրականացվում է Երևան քաղաքում և Լոռու, Շիրակի, Կոտայքի, Գեղարքունիքի, Սյունիքի, Արարատի մարզերում:</p> <p>2. 2025 թվականին Նախարարությունը Յունիսեֆի հետ համատեղ իրականացրել է նորարարական համարվող e-քարտ ծրագիրը: Այն իրենից ներկայացնում է էլեկտրոնային դրամապանակի միջոցով տրամադրվող նպատակային և թիրախավորված սոցիալական աջակցության ծրագիր, որի շահառու ճանաչված անձինք և ընտանիքները ստանում են համալիր գնահատման արդյունքում</p>	<p>Միջոցառման շրջանակներում ծառայություն են ստանում 700 անձ:</p> <p>2025 թվականի ընթացքում շահառու է ճանաչվել 740 ընտանիք, որոնց շարքում զգալի թիվ են կազմել ԼՂ-ից տեղահանված անձինք և ընտանիքները: Մինչև դեկտեմբերի 30-ը վճարում կստանա ևս 462 ընտանիք:</p>	

վերհանված առաջնային կարիքների՝ էլեկտրոնային դրամապանակի միջոցով բավարարման հնարավորություն: Ծրագիրն ուղղված է առավել խոցելի ընտանիքներին ՄՄԾ տարածքային կենտրոնների կողմից իրականացվող սոցիալական դեպքի վարման շրջանակում շահառուներին աջակցության տրամադրմանը:

Ե-քարտ ծրագրով տրամադրվում են սոցիալական աջակցության հետևյալ տեսակները՝ հետևյալ չափաքանակով.

- Ամանորյա քարտ սննդի ձեռքբերման համար՝ 50.000 ՀՀ դրամ մեկ ընտանիքի հաշվով,

- Մանկան խնամքի քարտ, տրամադրվում է հղի կանանց և կերակրող մայրերին (0-3 ամսական երեխաներ ունեցող)՝ նախատեսելով 40.000 ՀՀ դրամ սոցիալական աջակցություն,

- Հագուստի և կոշիկի քարտ, տրամադրվում է ըստ ընտանիքում 0-17 (17-ը ներառյալ) տարեկան երեխաների թվի, և յուրաքանչյուրի համար կազմում է 25.000 ՀՀ դրամ, բայց ոչ ավել քան 100.000 ՀՀ դրամն է մեկ ընտանիքի հաշվով,

- Առողջապահական քարտ, տրամադրվում է այն ընտանիքներին, որոնց անդամներից որևէ մեկն ունի առողջական խնդիր: Սոցիալական աջակցության չափը շահառու ճանաչված ամեն ընտանիքի համար 40.000 ՀՀ դրամ է,

- «Վերադարձ դպրոց» քարտ, տրամադրվում է դպրոց չհաճախող/կրթությունից դուրս մնացած երեխաներին՝ նախատեսելով 60.000 ՀՀ դրամ ընտանիքի՝ կրթությունից դուրս մնացած յուրաքանչյուր երեխայի համար:

		<p>10.4 Սոցիալական խնդիրների լուծման նոր ձևաչափի գործարկում՝ խնդրի արձանագրումից մինչև դրա լուծումը:</p>	<p>2025 թվականի հուլիսի 4-ին ընդունվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի «Սոցիալական պաշտպանության միասնական տեղեկատվական համակարգի ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության տեղեկատվական ենթահամակարգի կառուցվածքը, ներառվող տվյալների ցանկը, շահագործման և վարման կարգը հաստատելու մասին» N 61-L/1 հրամանը, որն ընդգրկում է Նախարարությանը վերապահված ոլորտներում համապատասխան տեղեկատվական ենթահամակարգերը:</p>	<p>Սոցիալական պաշտպանության միասնական տեղեկատվական համակարգը հասանելի է <a href="http://e-social.am">http://e-social.am</a> հասցեով:</p>	
<b>3. Պարենի օգտագործում</b>					
11	<p>Բնակչությանը լիարժեք և առողջապահական նորմերին համապատասխանող սննդով ապահովում: Սննդամթերքի որակի և անվտանգության մակարդակի բարելավում:</p>	<p>11.1 Առողջ սննդակարգի վերաբերյալ ուղեցույցների մշակում և դասընթացների կազմակերպում</p>	<p>Հաշվետու ժամանակահատվածում հանրակրթական դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատությունում իրականացվել են իրազեկման աշխատանքներ, մասնավորապես՝ թիրախային խմբերին տեղեկատվություն է ներկայացվել անվտանգ սնունդ ընտրելու սկզբունքների և սպառողների իրավունքների վերաբերյալ:</p>		
		<p>11.2 Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների իրականացում</p>	<p>Առողջ ապրելակերպի՝ ներառյալ առողջ սնուցման վերաբերյալ հանրային իրազեկման նպատակով իրականացվել են լուսաբանման հետևյալ աշխատանքները՝ կազմակերպվել է 2 ասուլիս, 20 հաղորդագրություն, 24 հարցազրույց, ԱՆ պատվերով պատրաստվել է 10 տեսանյութ: Մամուլի հաղորդագրությունները և առողջապահության նախարարության պատվերով պատրաստված տեսանյութերն ու հոլովակները տեղադրվել են ԱՆ պաշտոնական կայքում, սոցիալական</p>	<p>Կազմակերպվել է 2 ասուլիս, 20 հաղորդագրություն, 24 հարցազրույց, ԱՆ պատվերով պատրաստվել է 10 տեսանյութ: Ընդհանուր առմամբ 10 մարզերի քաղաքներում և Երևանում ընտանեկան ձևաչափով իրականացվել են առողջ կենսաձևի քարոզչության ընդհանուր թվով 11 արշավներ՝ 5000-ից ավելի բնակչության մասնակցությամբ:</p>	

հարթակներում և տարածվել զանգվածային լրատվամիջոցների միջոցով:

Նախարարության կայքում ստեղծվել է «Առողջ ապրելակերպ» դարան <https://www.moh.am/#1/6901>, որտեղ տեղադրված են առողջ ապրելակերպի վերաբերյալ տեսահոլովակներ և տեղեկատվական նյութեր:

Առողջ սովորությունների ձևավորմանը նպաստելու, առողջ կենսաձևի կայուն գաղափարական ասոցիացիաներ ստեղծելու, ընտանիքները առողջ ապրելակերպի գաղափարի շուրջ միավորելու նպատակով՝ 10 մարզերի քաղաքներում և Երևանում ընտանեկան ձևաչափով իրականացվել են առողջ կենսաձևի քարոզչության ընդհանուր թվով 11 արշավներ:

Արշավների իրականացման ընթացքում ներկայացվել են:

Ընդհանուր առմամբ՝ 11 միջոցառումների ընթացքում ներգրավվել են 5000-ից ավել մասնակիցներ, ներառյալ միջին և ավագ դպրոցի աշակերտներ, ուսուցիչներ, ծնողներ, մարզպետարանների, քաղաքապետարանների, բժշկական միավորումների ներկայացուցիչներ (հղումը՝ [https://www.facebook.com/watch?v=1149273160696209&locale=hy\\_AM](https://www.facebook.com/watch?v=1149273160696209&locale=hy_AM)):

Արշավների ակտիվ մասնակիցներին առողջապահության նախարարության կողմից տրամադրվել են շնորհակալագրեր և պատվոգրեր:

<p>11.3 Կերակրի աղում յոդի պարունակության շարունակական մոնիթորինգի իրականացում</p>	<p>Առողջապահության նախարարության կողմից իրականացվում է կերակրի աղում յոդի պարունակության շարունակական մոնիթորինգ: Կերակրի աղի նմուշների հետազոտությունների արդյունքում արձանագրված շեղումների մասին տեղեկատվություն է ներկայացվում Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին՝ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:</p>	<p>Սահմանային պետական վերահսկողության շրջանակում 137 անգամ տնտեսավարող սուբյեկտների կողմից ներմուծվող կերակրի աղից կատարվել է նմուշառում և ներկայացվել լաբորատոր փորձարկման «Յոդի գանգվածային մաս» ցուցանիշով:</p>	
<p>11.4 Դպրոցներում սննդի և սնուցման հետ կապված միջոցառումների իրականացում</p>	<p>Հանրապետության 10 մարզերի հանրակրթական դպրոցի տարրական դասարանների աշակերտներն ապահովված են տաք սննդով: Նախապատրաստական աշխատանքներ են տարվել Երևան քաղաքի 10 հիմնական դպրոցներում՝ 2026 թվականին դպրոցական սննդի պիլոտային ծրագրի ներդրման ուղղությամբ: Եվրասիական զարգացման բանկը, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը և «Երեմյան Փրոցեքթս» ընկերությունը պաշտոնապես մեկնարկել են «Կաթ դպրոցներին» նախաձեռնությունը Երևանում և Լոռիում:</p>	<p>Հանրապետության 10 մարզերի դպրոցների 1-4 դասարանների և նախակրթարանների շուրջ 107.000 երեխաներ օգտվում են «Դպրոցական սնունդ» ծրագրից:</p>	
<p>11.5 Սննդամթերքում միկրոտարրերի (Ֆոլաթթու և երկաթ) պարունակության գնահատում</p>	<p>«ՀՀ-ում միկրոսննդանյութերի ընդունման գնահատում և հանրային իրազեկման համար անհրաժեշտ գիտամեթոդական ապահովում» ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային ֆինանսավորման պետական ծրագրի շրջանակում ուսումնասիրվել են միկրոսննդանյութերի գնահատման միջազգային առաջավոր փորձն ու սննդակարգային ռեֆերենս արժեքները:</p>	<p>- Մարդու սննդակարգում երկաթի վերաբերյալ գիտահանրամատչելի հոդվածի տպագրություն, - Սննդամթերքում երկաթի պարունակության տվյալներ: Ներկայումս ամփոփվում են տվյալները և կազմում հաշվետվությունը:</p>	

			<p>Երկաթի ընդունման քանակական գնահատման նպատակով կազմվել է բնակչության սննդակարգում հիմնական սպառվող և երկաթի հավանական աղբյուր համարվող սննդամթերքի նմուշառման պլան, այնուհետև՝ այդ մթերքների նմուշառում և երկաթի պարունակության որոշման համար տարրալուծման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ, սննդամթերքի 146 նմուշի մեջ որոշվել են երկաթի պարունակությունները: Երկաթի պարունակության տվյալների և Կենտրոնի՝ սննդամթերքի անհատական սպառման տվյալների հենքերի համադրմամբ՝ գնահատվել են բնակչության սննդակարգում երկաթի օրական ընդունման չափաքանակները:</p>		
		<p>11.6 Սննդամթերքի առանձին տեսակներում վիտամիններով և միկրոտարրերով հարստացման ծրագրի մշակում</p>	<p>Միջոցառումների իրականացումը կախված է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից 11.5 միջոցառման արդյունքներից: Ֆինանսավորման ձգձգման պատճառով Ակադեմիայի կողմից գնահատման աշխատանքները մեկնարկել են 1 տարի ուշացումով:</p>		
		<p>11.7 Սննդամթերքի վիտամիններով և միկրոտարրերով հարստացված ծրագրի ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում</p>	<p>Ակադեմիայի կողմից սննդամթերքում միկրոտարրերի պարունակության գնահատման արդյունքների հիման վրա առողջապահության նախարարության կողմից կմշակվի սննդամթերքի առանձին տեսակներում վիտամիններով և միկրոտարրերով հարստացման ծրագիր:</p>		
<b>4. Պարենի ապահովվածության համակարգի կայունություն</b>					
13	Տնտեսավարող սուբյեկտների անխափան	13.1 Ապահովագրական ամբողջական համակարգի	ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի N 1485-Լ որոշմամբ իրականացվում է Գյուղատնտեսության	Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձական ծրագրի	

	գործունեության ապահովում	ներդրման նպատակով հանրապետության 10 մարզերում գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրության պիլոտային ծրագրի իրականացում	ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիրը: Ծրագրի շրջանակում 2025 թվականի գյուղատնտեսական տարվա համար գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվել է ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի մինչև 80 (ներառյալ) տոկոսի չափով սուբսիդավորում:	շրջանակներում 2025 թվականի գյուղատնտեսական տարվա համար կնքել է 32 պայմանագիր, ապահովագրվել է 20 հա, համախառն ապահովագրավճարը կազմել է շուրջ 1.86 մլն ՀՀ դրամ, սուբսիդավորված գումարը՝ շուրջ 1.3 մլն ՀՀ դրամ, տրամադրվել է շուրջ 788 հազ. ՀՀ դրամի հատուցում:	
14	Պարենապահովման և սննդամթերքի բաշխման համակարգի մշակում, ներդրում և դրանց անխափան ու արդյունավետ աշխատանքի ապահովում արտակարգ իրավիճակների պայմաններում	14.1 Արտակարգ իրավիճակների ժամանակ պարենային արագ արձագանքման և ռիսկերի կառավարման մեխանիզմների ներդրում	<p>Լրամշակման փուլում է գտնվում Նյութական պահուստի նոր մոդելի հայեցակարգի նախագիծը, որի համատեքստում կվերանայվեն և կմշակվեն ՀՀ-ին սպառնացող հնարավոր ճգնաժամային իրավիճակների սցենարները և դրանցից յուրաքանչյուրին հակազդման համար անհրաժեշտ ապրանքացանկերը, ինչպես նաև կապահովվի արտակարգ իրավիճակների ժամանակ պարենային արագ արձագանքման և ռիսկերի կառավարման մեխանիզմների ներդրումը: Նախատեսվում է նաև նյութական պահուստի պաշարների պահպանման, թարմացման, տեղափոխման գործընթացի մրցույթային կարգի պատվիրակում մասնավոր կազմակերպություններին: Կներդրվեն նաև նյութական պաշարների ձևավորման գործընթացի վերահսկողության մեխանիզմներ:</p> <p>Արդյունքում կունենանք ռիսկերի կանխարգելում և նվազեցում, ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխվածության ապահովում և պահպանության ծախսերի</p>		

			<p>կրճատում, ինչպես նաև բնական կորուստի բացառում:</p> <p>Բացի այդ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փորձագետների կողմից մշակվել է արտակարգ իրավիճակների զամբյուղի 2 մոդելներ, որոնք նպատակ ունեն ապահովել <b>գոյատևման և կարճաժամկետ պարենային անվտանգություն</b> արտակարգ իրավիճակներում՝ պատերազմ, բնական աղետներ, մատակարարման շղթայի խափանում և այլն:</p>		
15	<p>Չարգացած լոգիստիկ ենթակառուցվածքներ և ագրոպարենային արտադրանքի իրացման աջակցության ծառայությունների մատուցում</p>	<p>15.1 Սպասարկման ժամանակակից ենթակառուցվածքներ, մատուցվող բարձրորակ ծառայություններ</p>	<p>- Համաձայն ՀՀ մարզպետարաններից ստացված՝ մարզերում 2025 թվականի ընթացքում միջազգային կառույցների աջակցությամբ կամ մասնավոր ներդրումներով ստեղծված, գործարկված, կառուցման փուլում գտնվող և առաջիկայում պլանավորված սառնարանային պահեստավորման վերաբերյալ տեղեկատվության համաձայն.</p> <p>1) Արագածոտնի մարզ – 26 սառնարանային տնտեսություն, կառուցման փուլում է գտնվում 3 սառնարանային տնտեսություն,</p> <p>2) Լոռու մարզ - 1 սառնարանային տնտեսություն, կառուցման փուլում է գտնվում 1 սառնարանային տնտեսություն,</p> <p>3) Արարատի մարզ - 2 սառնարանային տնտեսություն, կառուցման փուլում է գտնվում 11 սառնարանային տնտեսություն,</p> <p>4) Կոտայքի մարզ – 6 սառնարանային տնտեսություն, կառուցման փուլում է գտնվում 4 սառնարանային տնտեսություն,</p>	<p>Այսօրվա դրությամբ լոգիստիկ և շուկայավարման կենտրոնների գործառույթներ են իրականացվում «Սպայկա» և «Արլեամ (Սորտստոր)» ՍՊԸ-ների կողմից: 2025 թվականի սեպտեմբերին «Սպայկա» ՍՊԸ-ի կողմից Արարատի մարզի Տափերական բնակավայրում շահագործման է հանձնվել շուրջ 10000 տոննա հզորությամբ սառնարանային համալիր: 2025 թվականի նոյեմբերին «Ագրոպրո» ՓԲԸ-ի կողմից շահագործման է հանձնվել ժամանակակից արդիական տեխնոլոգիաներով հագեցած գյուղատնտեսական առաջնային արտադրանքի լոգիստիկ կենտրոնը, որը կիրականացնի թարմ մրգի սառեցման, պահեստավորման, տեսակավորման,</p>	

5) Շիրակի մարզ - 8 սառնարանային տնտեսություն, կառուցման փուլում է գտնվում 2 սառնարանային տնտեսություն,

6) Արմավիրի մարզ - 10 սառնարանային տնտեսություն, կառուցման փուլում է գտնվում 8 սառնարանային տնտեսություն,

7) Տավուշի մարզ - 8 սառնարանային տնտեսություն, կառուցման փուլում է գտնվում 1 սառնարանային տնտեսություն,

8) Սյունիքի մարզ - 1 սառնարանային տնտեսություն,

9) Գեղարքունիքի մարզ - 16 սառնարանային տնտեսություն:

- Բացի այդ, Ասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող ADB CAFSEP ծրագրի «Agricultural Logistics Hubs Feasibility Study» առաջադրանքի շրջանակներում իրականացվում է Հայաստանի համար երկու գյուղատնտեսական լոգիստիկ հանգույցների տեխնիկատնտեսական իրագործելիության ուսումնասիրություն՝ Շիրակի և Տավուշի մարզերում, որի նպատակն է բարձրացնել բուսաբուծական արժեշտիքների արդյունավետությունը, նվազեցնել հետբերքահավաքային կորուստները, բարելավել շուկաներին հասանելիությունը և ձևավորել ներդրումային պատրաստի ենթակառուցվածքային լուծումներ: Կկատարվեն նաև լոգիստիկ կենտրոնների հավանական տեղակայման և մասշտաբների որոշում, նախնական նախագծային և ծախսային հաշվարկներ:

- Գերմանիայի Դաշնության Բեռլին քաղաքում ստեղծվել է մեկ հավաքական պահեստ և Եվրոպայում հայկական գինիների առցանց

փաթեթավորման և արտահանման գործառույթներ: Լոգիստիկ կենտրոնն ունի ժամում 25 տոննա տեսակավորման և փաթեթավորման, 1800 տոննա երկարաժամկետ պահպանման և օրական մինչև 350 տոննա արտահանման, ինչպես նաև ժամում շուրջ 1500 հատ ստվարաթղթե տարաների արտադրության հզորություն: Զուգահեռաբար ընթանում են սառնարանային հզորությունների ավելացման աշխատանքներ:

2025 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ հարթակի

			վաճառքի հարթակ, որը հասանելի է winesofarmenia.store կայքով:	միջոցով ԵՄ-ում վաճառվել է շուրջ 12000 շիշ գինի:	
16	Պարենային անվտանգության համակարգի մարտահրավերներին համահունչ բարելավված որակավորում ունեցող կադրային ներուժ	16.1 Ագրոարդյունաբերական համալիրի համար անհրաժեշտ մասնագետների պատրաստում և, կարիքի դեպքում, ուսումնական ծրագրերի պարբերաբար վերանայում տեխնիկական և տեխնոլոգիական զարգացումներին համապատասխան	<p><b>Տեխնոլոգիական արդի զարգացումներին համահունչ որակավորում ունեցող մասնագետների տարեկան առնվազն 5 տոկոս աճ</b></p> <p>2025 թվականից ներդրվել է երկու նոր մագիստրասական ծրագիր՝ «Կայուն քաղաքներ և կանաչ տեխնոլոգիաներ», «Կանաչ տնտեսության ռազմավարական կառավարում» և մեկ բակալավրիատի՝ «Ագրոմեխատրոնիկա և ճշգրիտ ռոբոտատեխնիկա»:</p> <p>Վերանայվել են «Ագրոարդյունաբերության» ոլորտի մշակված և վերանայված պետական կրթական չափորոշիչների ցանկը, մասնավորապես.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. «Գինեգործություն և հյուրերի արտադրություն»,</li> <li>2. Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն,</li> <li>3. «Ագրոնոմիա»,</li> <li>4. Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում,</li> <li>5. Սառնարանային տնտեսություն,</li> <li>6. Գինեգործություն (խաղողագործություն և էնոլոգիա),</li> <li>7. «Գյուղացիական (Ֆերմերային) տնտեսության կազմակերպում»,</li> <li>8. Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում:</li> </ol> <p>Մշակվել են նաև՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. «Այգեգործություն»</li> </ol>	<p>Ագրոարդյունաբերության ոլորտի մշակված և վերանայված 10 պետական կրթական չափորոշիչ:</p> <p>ՀՀ կառավարության որոշմամբ 14 կրթական ծրագրերով սովորող ուսանող ստանալու է 70000 ՀՀ դրամ կրթաթոշակ, որը կնպաստի հետագայում մասնագիտությունների գրավչության բարձրացմանը:</p>	

			<p>2.«Կաթնաֆերմերային տնտեսության կազմակերպում» ցանկերը:</p>		
	<p>16.2 Անասնաբույժ մասնագետների վերապատրաստում</p>		<p>ՀԱԱՀ-ում շարունակվում է «Կենդանիների վակցինատոր» մասնագիտական ուսուցումն, ինչպես նաև իրականացվում է «Անասնաբուժական կիրառական համաճարակաբանության վերապատրաստում-Առաջնագիծ» (ԱԿՀՎ) պիլոտային դասընթացը:</p> <p>2024 թվականի հունիսի 27-ին հաստատված «Անասնաբույժների որակավորում ունեցող մասնագետների վերապատրաստման կարգը հաստատելու մասին» 995-Լ որոշման համաձայն՝ 2025 թվականի ընթացքում իրականացվել է «Պատվաստող (վակցինատոր)՝ գյուղատնտեսական կենդանիների» պատրաստման հնգօրյա և վերահավաստագրման երկօրյա դասընթացներ, որոնց մասնակցել է 25 հոգի:</p>	<p>Ուսուցմանն ընդհանուր առմամբ մասնակցել է 148 հոգի, որից 8-ը՝ 2025 թվականին: Ծրագրի շրջանակում վերահավաստատագրվել է 49 անձ:</p> <p>Դասընթացը հաջողությամբ ավարտեցին ՀՀ էկոնոմիկայի նախարարության 5 և ՀՀ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 3 աշխատակից:</p> <p>2025 թվականի ընթացքում իրականացվել է «Պատվաստող (վակցինատոր)՝ գյուղատնտեսական կենդանիների» պատրաստման հնգօրյա և վերահավաստագրման երկօրյա դասընթացներ, որոնց մասնակցել է 25 հոգի:</p>	
	<p>16.3 Դպրոցներում ազրոտեխնոլոգիական մասնագիտությունների ոլորտի նկատմամբ հետաքրքրության խթանման նպատակով Հանրապետության 10 մարզերի ավագ դպրոցներում «Ազրոտեխնոլոգիա» դասընթացի ներդրում,</p>		<p>Հանրակրթական դպրոցներում գործել են «Նորարար այգի» և «Նորարար ջերմատուն» խմբակները: Նշված խմբակներում 8-9-րդ դասարանների սովորողներն առանձին թեմատիկ դասերի շրջանակում ուսումնասիրել են հարակայուն գյուղատնտեսության, պատասխանատու սպառման, և կոմպոստացման բազմազան ձևերի թեմաները՝ գործնական պարապմունքների և տեսական գիտելիքների միջոցով:</p>	<p>«Նորարար այգի» և «Նորարար ջերմատուն» խմբակներ ունեցող դպրոցների քանակը 45 է:</p> <p>«Նորարար այգի» և «Նորարար ջերմատուն» խմբակներում սովորողների քանակը կազմել է 750 սովորող:</p> <p>Գորիս խոշորացված համայնքների 15 բնակավայրի</p>	

<p>մասնագիտական կողմնորոշման ակումբների, խմբակների ձևավորում</p>	<p>ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի օգոստոսի 15-ին N 1488-Ա/2 հրամանով հաստատվել է «Ազրոտեխնոլոգիա» մասնագիտական կողմնորոշման դասընթացի ծրագիրը, որը ՀԱԱՀ ջանքերով 2023-2024 ուսումնական տարվանից ներդրվել է Տավուշի մարզի Դիլիջանի և Իջևանի ավագ դպրոցներում: Դասընթացը պարտադիր է և շարունակական բնույթ ունի:</p> <p>«Իմ քայլը» բարեգործական հիմնադրամը, կնքելով եռակողմ հուշագիր Հայաստանի ազգային ագրարային համալսարանի և Սյունիքի մարզպետարանի հետ, իր «Հորիզոններ» դուալ կրթական ծրագրի շրջանակում, «Ազրոտեխնոլոգիա» մասնագիտական կողմնորոշման դասընթացը ներդրել է Սյունիքի մարզի Սիսիան և Գորիս խոշորացված համայնքների 15 բնակավայրի դպրոցների ավագ դասարաններում: Այս պահին ընդհանուր շահառուների՝ դասընթացների մասնակից աշակերտների թիվը հասնում է շուրջ 400-ի:</p> <p>ՀԱԱՀ և «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի ջանքերով և ֆինանսական ներդրումների միջոցով վերապատրաստվել են ուսուցիչներ, մշակվել են ուսումնառության նյութերը, դասագրքերը, ինչպես նաև կազմակերպվել են ամառային դպրոցներ շահառու աշակերտների համար: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են պրակտիկաներ՝ այցելելով համապատասխան տեխնոլոգիական լաբորատորիաներ, անտառներ, ջրամբարներ, արգելոցներ և</p>	<p>դպրոցների ավագ դասարաններում:</p> <p>Սյունիքի մարզի 15 բնակավայրի դպրոցների ավագ դասարաններում «Ազրոտեխնոլոգիա» մասնագիտական կողմնորոշման դասընթացի մասնակիցների թիվը կազմել է 400:</p>	
--	---	--	--

	<p>ագրոպարենային ոլորտում գործունեություն ծավալող տնտեսություններ ու կազմակերպություններ: Աշակերտները ներգրավվել են համայնքային զարգացման և ստարտափային ծրագրերում: Դպրոցների հետ կնքվել են կրեդիտների ճանաչման պայմանագրեր:</p>		
<p>16.4 Թվային տեխնոլոգիաների, արհեստական բանականության կիրառման, հիվանդությունների կառավարման ծրագրերի մշակում և ներդրում</p>	<p>ՀՀ պետական կառավարման մարմինների կարիքներից բխող, սոցիալ-տնտեսական ազդեցություն ունեցող խնդիրների ուղղությամբ գիտահետազոտական նախագծերի աջակցման, այդ թվում՝ նաև գյուղատնտեսության մեջ գիտության արդյունքների կիրառմանը նպաստելու և գիտության տնտեսական ազդեցությունը մեծացնելու նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025թ.հունիսի 18-ի N 1415-Ա/2 հրամանի համաձայն Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն առաջին անգամ կազմակերպել է «Պետության պահանջարկի վրա հիմնված (Demand Driven) գիտահետազոտական նախագծեր 2025» մրցույթ՝ 24 ամիս տևողությամբ գիտահետազոտական նախագծեր իրականացնելու նպատակով: Պետության պահանջարկի վրա հիմնված թեմաների շուրջ 39%-ն ուղղված է տնտեսության և գյուղատնտեսության ոլորտներին: Մրցույթի արդյունքներն ամփոփվել են 2025 թվականի օգոստոսի 1-ին:</p> <p>ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար (ԱԳԻԻ ՔԵՄՓ) ծրագիր» ծրագրի գյուղատնտե-</p>	<p>AgroTwin հարթակը կներառի տվյալների մի քանի վահանակներ, որոնք թույլ կտան քաղաքականություն</p>	

	<p>սական տվյալների ու քարտեզագրման համակարգի նախագծում և փորձարկում բաղադրիչի շրջանակներում ՀԱԱՀ-ի աշխատակիցների կողմից մշակվում է երկրատեղեկատվական համակարգերի և հեռահար զոնդավորման հնարավորությունների օգտագործմամբ թվային երկվորյակ տեխնոլոգիա գյուղատնտեսության համար որպես նորարար և համապարփակ հարթակ՝ սեզոնային բերքի արդյունավետ կառավարման և ֆերմերային տնտեսությունների գործունեության օպտիմալացման համար: Տվյալ գործիքն ու հարթակը կրում են AgroTwin անվանումը:</p> <p>2025 թվականին շարունակվել է հանրապետության հողօգտագործման գոտիների (տիպային), համայնքների ագրոկլիմայական ռեսուրսների թվային քարտեզագրումը, կատարվել են վերլուծություններ և գնահատումներ, իրականացվել է հողային ֆոնդի հաշվեկշռի փոփոխության հայտնաբերում կապված հողօգտագործման և հողասեփականատերերի տնտեսական գործունեության հետ, գյուղատնտեսական հողատեսքերի քանակական հաշվառում ըստ մշակաբույսերի, ըստ սեփականատերերի, ըստ հողերի գնահատման խմբերի, մելիորատիվ վիճակի, հողակլիմայական պայմանների, դրանց հիման վրա թեմատիկ քարտեզների ստեղծում Երկրատեղեկատվական (GIS) և հեռահար զոնդավորման (RC) տեխնոլոգիաների կիրառմամբ: Մշակվել են տնտեսագիտամաթեմատիկական մոդելներ, որը կնպաստի հողերի կոնսոլիդացիայի հիմնախնդրի լուծման տեմպերի</p>	<p>մշակողներին, ֆերմերներին, ներդրողներին և գյուղատնտեսության ոլորտը հետազոտողներին մոդելավորել, պլանավորել ու վերլուծել՝ արդյունավետ որոշումներ կայացնելու, օպտիմալ քաղաքականություն մշակելու, պարենային անվտանգությունը բարելավելու և գյուղատնտեսությունն ավելի կայուն դարձնելու համար:</p> <p>Հետազոտվել են Արարատի մարզի Արտաշատ և Վեդի համայնքների 10 բնակավայրերի (5 նախալեռնային և 5 հարթավայրային), գյուղատնտեսական նշանակության հողերից կոնսոլիդացիայի և արդյունավետ օգտագործման հիմնախնդրի լուծման հիմնարար ուղղությունները, մշակվել են անալիտիկ թվային մոդելներ, որոնք թույլ են տալիս հիմնավորելու այս ուղղությամբ պետության կողմից վարած ռազմավարական ծրագրերի արդյունավետությունը:</p> <p>Կատարված հետազոտությունների արդյունքում վարկանիշային միջազգային պարբերականներում հրատարակվել է 7 գիտական հոդված,</p>	
--	---	---	--

	<p>արագացմանը, կխթանի արդյունավետ հողօգտագործման համակարգերի ձևավորմանը և կայուն գյուղատնտեսության զարգացմանը:</p> <p>«Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհային ծրագրի «Գաղափարի փուլ» բաղադրիչի շրջանակում դրամաշնորհ է ստացել «Պալեանս» ՍՊԸ-ն, որի առաջարկած լուծումը հետևյալն է. բարձր ճշգրտության սենսորները վերահսկում են փեթակների պարամետրերը, որոնք իրական ժամանակում պատկերացումներ են տալիս փեթակների պրոակտիվ խնամքի համար: Արհեստական բանականության ալգորիթմները վերլուծում են տվյալները՝ առաջարկելով հետախուզություն փեթակների վիճակի և մեղուների գործունեության վերաբերյալ՝ հնարավորություն տալով ժամանակին միջամտություններ կատարել:</p>	<p>որից երկուսը՝ Q1, մեկը՝ Q3, արդյունքները զեկուցվել են համապատասխան գիտաժողովներում, Արտաշատի և Վեդի համայնքապետարաններում կազմակերպված գիտագործնական սեմինարներում՝ ֆերմերներին, համայնքի ղեկավարներին:</p> <p>Հետազոտությունների արդյունքների մասին Արարատի մարզի Արտաշատ և Վեդի համայնքներից քննարկումներին մասնակցել են թվով 65 հողօգտագործողներ, հողաշինարարներ, ֆերմերներ և վարչական ղեկավարներ:</p> <p>Առողջության առաջադեմ մոնիտորինգը հետևում է առանձին մեղուների բարեկեցությանը, ինչը հեշտացնում է խնդիրների վաղ հայտնաբերումը: Մեղրի բերքի ճշգրիտ գնահատումը, օգտագործելով փեթակների տվյալները և արհեստական բանականության վրա հիմնված մոդելները, ապահովում են արդյունավետ պլանավորում և կայուն մեղրի արտադրություն: Այս նորարար լուծումը պաշտպանում է սննդի անվտանգությունը, կենսաբազմազանությունը և</p>	
--	---	---	--

			մեղուների պոպուլյացիաները՝ միաժամանակ կիրառելով էկոգիտակցական պրակտիկա:	
	<p>16.5 Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ աջակցություն գիտակրթական համակարգերի զարգացմանը և շուկայի պահանջներին համապատասխան կադրերի պատրաստում</p>	<p>2025 թվականին իրականացվել են գործնական սեմինարներ ջուր օգտագործող ընկերություններում, պոմպային կայաններում, ֆերմերային տնտեսություններում համայնքապետարաններում ջրովի և անջրդի վարելահողերի օգտագործման արդյունավետության բարձրացման, բնական կերահանդակների դեգրադացիայի գնահատման և դրանց կանխարգելման միջոցառումների մշակման ուղղություններով:</p>	<p>2025 թվականին երիտասարդ մասնագետներ են վերապատրաստվել հետևյալ ուղղություններով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• բուսաբուծական մթերքների վերամշակում՝ պահածոյացման տեխնոլոգիաներ,</li> <li>• դեկորատիվ բույսերի ագրոտեխնոլոգիա և լանդշաֆտային դիզայն,</li> <li>• տրակտորիստ-մեքենավարներ,</li> <li>• հացատեսակների և հրուշակեղենի արտադրություն,</li> <li>• շոկոլադագործություն,</li> <li>• ձկնաբուծություն,</li> <li>• չրագործություն,</li> <li>• գարեջրագործություն</li> <li>• մեղվաբուծության հիմունքներ,</li> <li>• ԱԹՍ-ների կիրառմամբ գյուղատնտեսական սրսկումների իրականացում,</li> <li>• պտղաբուծություն.</li> <li>• դասավանդման ժամանակակից մեթոդներ, ջերմատնային մշակաբույսերի մշակություն և կառավարում: Բարելավվել և թարմացվել է ԱՏՀ լաբորատորիան, դրոնների ծրագրային ապահովման կազմը:</li> </ul>	

				<p>Ստեղծվել են միջառարկայական հետբուհական ծրագրեր (դասընթացներ, համատեղ ասպիրանտական ծրագրեր), որոնք բարձրացնում են աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների ներուժը:</p> <p>2025 թվականի հունվարի 1-ից՝ 220 երիտասարդ վերապատրաստվել է հետևյալ ուղղություններով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>-բուսաբուծական մթերքների վերամշակում՝ պահածոյացման տեխնոլոգիաներ,</li> <li>-դեկորատիվ բույսերի ագրոտեխնոլոգիա և լանդշաֆտային դիզայն,</li> <li>-տրակտորիստմեքենավարներ,</li> <li>-հացատեսակների և հրուշակեղենի արտադրություն,</li> <li>- շոկոլադագործություն,</li> <li>-ծկնաբուծություն,</li> <li>-չրագործություն,</li> <li>-գարեջրագործություն,</li> <li>-մեղվաբուծության հիմունքներ,</li> <li>-ԱԹՍ-ների կիրառմամբ գյուղատնտեսական սրսկումների իրականացում,</li> <li>-պտղաբուծություն,</li> <li>-դասավանդման ժամանակակից մեթոդներ,</li> <li>- ջերմատնային մշակաբույսերի մշակություն և կառավարում:</li> </ul>
17	Գյուղատնտեսության ոլորտի	17.1 Գյուղացիական տնտեսավարողների	ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փորձագետի	

<p>վիճակագրության հավաքագրման համակարգի բարելավում</p>	<p>գրանցման և գյուղատնտեսական արտադրանքի հայտարարագրման օրենսդրական դաշտի մշակում, հաստատում և փուլային ներդրում:</p>	<p>աջակցությամբ մշակվել է «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ ներառված են նաև գյուղացիական տնտեսավարողների գրանցման և գյուղատնտեսական արտադրանքի հայտարարագրման պահանջ սահմանելու մասին դրույթներ:</p> <p>Բացի այդ «Գյուղատնտեսական (խաղողի) արժեշտեղանի կառավարման համակարգի» ստեղծման և գործարկման նպատակով Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը 2024 թվականի հունիսի 27-ին ստորագրել է ՀԽԳՀ-ԵՄԾԶԲ-24/1 պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը, որով մեկնարկել են համակարգի ծրագրային ապահովման մշակման աշխատանքները՝ իտալական ABACO S.p.A. ընկերության կողմից:</p> <p>Ծրագրային ապահովման մշակման շրջանակում ծրագրավորման գործընթացները ընթանում են նախատեսված ժամանակացույցով:</p>	<p>Համաձայն նախագծի ժամանակացույցի՝ 2025 թվականի նոյեմբեր ամսվա դրությամբ, ABACO S.p.A.-ն ներկայացրել է համակարգի առանձին մոդուլների տեխնիկական փաստաթղթերը, որոնց հիման վրա մշակման փուլում են գտնվում ֆերմերների, արտադրողների, ստուգողների և քարտեզագրման մոդուլի օգտագործողի միջերեսները՝ ներառյալ դրանց ամբողջ գործառնական գործիքակազմը: Ինչպես նաև, գործընկեր կազմակերպությունը ներկայացրել է համակարգի ծրագրային ֆունկցիոնալ նախատիպերը:</p> <p>Համակարգի տվյալների քարտեզագրման գործընթացի շրջանակում անցկացվել են թեմատիկ քննարկումներ, և ներկայումս աշխատանքները ընթանում են Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության կողմից մշակված ուղեցույցի</p>	
--	---	--	--	--

				պահանջներին համապատասխան:	
--	--	--	--	------------------------------	--